ՊՐԱՐԱՏ

ԱՄԱՍԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ,

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ՏԱՐԻ Ի. ՍԵՊՏԵՄԲԵՐ—ՏՕ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ. Երկրաւոր բաղդաւորութեան բարիք (Քարոզմ.) Գ. ԱՒԱԶԱՆ 581
Ճառ վերացման սրբոյ Խաչին (Քարոզմ.) կարապետ Գ. ՏՕՔՄԱՃԵԱՆ 591
Կովբեանց 597
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ռուսաց հոգեւոր դպրոցները (Քարզ.) Սարգիս Գ. ՀՐԷԿ—ՆԱՂԱՐԵԱՆՑ 597
Աբրաքսի Հովիտը եւ Հայեր (Քարզ.) ՄԻՒՐԱՆ 605
ԱԶԳԱՅԻՆ. Վերադարձ վիճ. Հայրապետի.— Տարեդարձ թագման Ջեմա- րանի.— Հանդէս մրցանակաց բաշխման Իզմիրեանց կտակին 615
ԱՃԻԼ ԵԻ ԱՃԼՔ 625
ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ. (յօրազրութեանց Սիհօղլի) վարչականք Գաւառաստանական 625
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ 628

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

1887

ՅՈՒՅԱԿ ՎԱՃԱՌԵԼԻ ՄԱՏԵՆԻՑ·

ԳՐԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԻ Ս· ԷՋՄԻԱԾՆԻ·

	Ր.	Կ.
Այրիվանք կամ Գեղարդավանք	—	20
Աստուածպաշտութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ	—	70
Արարատ Ամենագիր տարեկան ամբողջ կազմեալ	2	—
Աւետարան Համաբարբառ վկայութեամբ	—	80
Բենիամին Փրանկլինի կեանքը	—	30
Գիրք Հանդիսականութեանց կայսերական տօնից	—	50
* Գոթոդիա ողբերգութիւն	1	—
Դատաստանագիրք Հայոց Մխիթար Գօշի	3	—
Դաշնագիր	—	15
Դասագիրք բաղդատական Աշխարհագրութեան	1	—
Դասագիրք Ընդհանուր պատմութեան.—Հին դարուց	1	—
Նոյն.—Միջին դարուց	1	—
Դասագիրք Քրիստոնէական հաւատոյ· Արէլ Եպիսկոպոսի	—	20
Դասագիրք Քրիստ· վարդապետութեան Գ· Ե· Այվազեան	—	40
Դպրոց տարեկան 1874—76	2	—
* Եօթն խօսք առ տղայս	—	20
* Թուաբանութիւն դարգացելոց Ա· Գալֆայեան	1	—
* Թամագիրք ատենի	8	—
Թամագիրք ձեռաց	2	—
* Լաբան Աւագ ուրբաթ	—	10
* » Առաւմն Կ· Պոլսոյ	—	10
* » Արև	—	10
* » Զատիկ տեառն	—	10
* » Երկինք և երկնայինք	—	10
* » Հոխիսիմ	—	10
* » Հնութիւնք Եգիպտոսի	—	10
* » Մեծն Ներսէս	—	10
* » Ս· Խաչ	—	10
* » Տօն Ծննդեան	—	10
* Խանգարմունք Հայկաբանութեան	—	50
Կաթուղիկէ մայր եկեղեցի Վաղարշապատայ	—	50
Կանոն աշակերտաց Գէորգեան ճեմարանի	—	10
Կանոն ընկերութեան Հայոց ճաւայի	—	10
Կանոն ծխական Դպրոցաց	—	20
Հանդէս Գ· տարեդարձի Գէորգեան ճեմարանի	—	10



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Թ. — ՇՐՋԱՆ Ի. 1887 ՏԱՐԻ Ի. ՍԵՊՏԵՄ. 30.

ԿՐՕՆԱԿԱՆ

ԵՐԿՐԱՒՈՐ ԲԱՂԴԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԲԱՐԻՔ.

1 Պետ. Դ. 10։

Ծառայեցէք միմեանց ամեն մէկդ՝ իւր ունեցած շնորհքովն, Աստուծոյ զանազան շնորհքների բարի անտեսների նման։

Ինչո՞ւ համար է աստուածային նախախնամութիւնն իւր երկրաւոր բարիքների պարգևներն էլ այնպէս անհաւասար կերպով բաժանել։ Ինչո՞ւ բազդաւորութեան մեծամեծ բարիքը գանվումէին շատ անգամ մի անարժան մարդու ձեռքն։ Ինչո՞ւ համար պակասէին շատ անգամ մի առաքինի ընտանիքի եր-

կրաւոր բարիքը մինչև այնքան՝ որ իւր ամենակարեւոր միջոցներն էլ չունենար։ Ինչո՞ւ համար վերին Տեսչութիւնը շատ անգամ անզօր ու ապարդիւն է թողնում մարդկութեան բարեկամի բարի կամքն։ Ի՞նչ երկինք կլինէր երկիրս, երբոր առաքինութիւնը, բարեպաշտութիւնն ու իմաստութիւնը արդէն հէնց այս աշխարհիս վերայ միացած լինէին շա՛տ կարելի բարեբաղդութեան հետ։

Այդպիսի՛ հարցումներ է շատ անգամ ուղղում հողեղէն մարդս իւր վիճակին, երբոր մէկի մարդուն թագաւորական աթոռի վերայ է տեսնում, իսկ ազնիւ միտք ու սիրտ ունեցողին՝ սաորութեան մէջ՝ գետնի վերայ հողի մէջ նստած։ Այդպիսի հարցումներ կրկնում է նա շա՛տ անգամ, երբոր սիրտը դժգոհ իւր վիճակից, վրդովուած է, ու իւր ունեցած դրութիւնն ուրիշ մարդոց դրութեան հետ է համեմատում, որոնց մասին որ նա համոզուած է, թէ իրանից գերազանց մարդիկ չեն՝ ոչ իրանց սրտի բարութիւնովն և ոչ իրանց հոգեւոր յատկութիւններովը։ Նա գանգատւում է այս հարցումներով, ակամայ, վերին Տեսչութեան իմաստութեանը, կամ գոնէ աս է քաշում իւր սրտիցն, որ Նախախնամութիւնն՝ ինչպէս ուրիշներին, նոյն չափով էլ իրան չի սիրել ու յաջողութիւն պարգեւել։

Բայց մի՛թէ յիրաւի՛ աստուածային նախախնամութիւնն իւր պարգեւած բազդաւորութեան բարիքը մատակարարելու մէջն անարդար է գտնուել։ Ո՞վ է ուրեմն աշխարհիս վերայ իւր սիրելին, ուրիշների մէջ ամենից աւելի բազդաւորեցրածն, որին որ դու իրաւունքով նախանձել կարողանայիր։

Ինքդ քեզ մի՛ կորցնիլ, խելքդ գլուխդ հաւաքիր ու քննի՛ր մի անգամ նախախնամութեան գործերն՝ ուշադրութիւնով ու լուրջ կերպով, որչափ որ կարճատես մարդու աչքը ընդունակ է աշխարհիս կառավարութիւնն ամեն կողմից նկատելու, հասկանալու։ — Ամեն մի լուրջ կերպով քննելդ աշխարհիս գործերը՝ քեզ ցոյց կտայ քո՛ իսկ անարդար դատողութիւնդ. քեզ կհամոզի որ՝ ոչ թէ քո առողջ բանականութիւնը, այլ քո անձնասիրութիւնն է քո միջից խօսում, ու քեզ կհաշտեցնի Աստուածոյ իմաստութեան արած կարգաւորութիւնների հետ։

Դու գանգատւում ես դժգոհութեամբ երկրաւոր բազդա-

սորութեան բարիքն անհատասար կերպով մատակարարուելոճ վերայ։ Դու տեսրում՝ ցաւում՝ ես, քեզ անբաղդ համարելով, որ քեզ այնչափ հարստութիւն, բարօրութիւն ու երեւելի անուն բաժին ընկած չէ ու չունիս, ինչպէս ուրիշներին, որ աւելի ունին, քան թէ դու։ Էլ մեզքանալ չկայ քո կողմից ուրիշներին, որոնք աւելի կարօտ են քան թէ դու, այդ ցոյց է տալի միայն նախանձելդ քեզանից աւելի ունեցողներին, ու այդ է, որ քեզ գանգատել է տալի։ Հէնց դու ինքդ չէիր ուզենալ խանգարել մարդկային ազգին ալնուացնելու համար շատ մեծ, գեղեցիկ ու շատ բարերար բազմազանութիւնը կացութիւնների ու վիճակների, դու ինքդ չէիր ուզենալ ապրել այնպիսի մի երկրում, ուր որ ամենքն էլ հաւասար լինէին, ուր որ ոչ մէկը պէտք չունենար մի ուրիշին, ուր որ ոչ մէկը իւր քաղաքակիցներուն չօգնէր, ուր որ ոչ մէկը յոյս չունենար իւր դրացուց, հարկաւոր ժամանակը, մի օգնութիւն գտնելու։ Մի հասարակութիւն՝ իւր հասարակաց կեանքովն ու բարիքներով՝ եթէ իւր մէջը չլինէր ոչ կեանք և ոչ յառաջադիմութիւն զարգացման կողմանէ, կներկայացներ վերջապէս բթութեան մի ցաւալի պատկեր։

Ի՛նչ ես ասում ուրեմն. քո միտքդ այն է, որ աշխարհիս կարգը քո չնչին ունայնասիրութեանդ համար պիտի խանգարուէր։ Եթէ որ այդպիսի մի բան մտածում լինէիր, քո պահանջմունքդ էլ մի յանդուգն մարդու անմտաբար արած անօգուտ լրբութիւն կլինէր ու մի խելագարի անսուտ ու անկարգ պահանջմունք. մարդիկն, երբոր սրտինդ իրանց յայտնէիր՝ առանց քաշուելու, քեզ վերայ կծիծաղէին ու ծակը կանէին քեզ. ու կարծո՞ւմ ես դու, որ ամենիմաստ Աստղծողդ իւր ամենակարող զօրութիւնը քո չիմարութիւններիդ պիտի ծառայեցնէր։

Բայց ինչո՞ւ էլ երկրաւոր բաղդաւորութեան բարիքն այնչափ շատ անգամ մի շատ անարժան մարդու ձեռքը պէտք է լինի։

—Ո՞ւմն ես դու շատ անարժան մարդ ասում՝, նորաձն, որ իրան պարգեւած բարիքները՝ քո դատաստութեամբդ՝ օգտակար կերպով գործ ածո՞ւը չգիտէ։ Բայց տեսնենք թէ՝ դու անկողմնապահ, արդարադատ, շատ խելօք ու լաւ հասկացող դատաւոր ես աշխարհիս հանգամանքների մէջ։ Տեսնենք թէ՝ դու

ամենիմաստ Նախախնամութեան գաղտնիքների մէջ նուիրուածն ես, որ կարողանաս նորա կարգադրութիւնների օգուտն ու վնասը ճիշտ և անսխալ կերպով որոշել։ Ո՞վ է քեզ երաշխաւոր այն մասին, որ միլիոնաւոր ուրիշ մարդիկ իրանց պարգեւած բաղդաւորութեան բարիքներն աւելի աղնիւ կերպով չեն գործ ածում, քան թէ նա, որին որ դու դատապարտում ես։ Ո՛ւ ապրիդ երեսում է միայն այս մէկ մարդն, որովհետև իւր ունեցած անունն, իշխանութիւնը, հարստութիւնը քեզ շլացնում են. բայց դու այն ուրիշ միլիոնաւոր մարդոց արած՝ կամ չարած գործերիդը տեղեկութիւն չունիս։ Ինքդ քեզ երաշխաւոր ես արդեօք, որ դու նորանց հանգամանքների մէջ՝ իսկ այնպէս կմնաածէիր, այնպէս կգործէիր, ինչպէս որ քո այժմեան սահմանափակ դրութեանդ մէջ։ Շատ անգամ չէ պատահել արդեօք, որ փոխել ես քո լեզուդ ու քո վարմունքդ, մինչև անգամ քո գաղափարդ, դատողութիւնդ, միտքդ ու սկզբունքդ էլ, նայելով միայն մի քիչ բանի մէջ քո հանգամանքներդ փոխուելուն։ — Մի դատիլ, ինքդ էլ չես դատուիլ։ Մի դատապարտիլ այն մարդուն, որ ուրիշ հանգամանքների մէջ գտնուելով, ուրիշ կրթութիւն ստացած լինելով, ուրիշ մտքեր ունենալով, ուրիշ կերպ է գործում, քանթէ դու։ Եթէ որ քեզ մի թագաւորազն իշխանուհի ծնած լինէր, եթէ որ հասարակ հագուստիդ տեղը քեզ թագաւորական ծիրանի հագցրած լինէր. եթէ որ քո նստարանդ թագաւորական աթոռ լինէր, քո մօտ բարեկամդ կեղծաւոր ու շոլոքորթող մի պալատական՝ կարող ես իմանալ, որ այն ժամանակ դու աշխարհիս վերայ մի աւելի աղնիւ դեր կխաղայիր։

Էլ ասեմ. արդեօք դու քո չափաւոր բաղդաւորութեանդ հանգամանքներումն ևս հէնց ամենից արժանաւորն ես քո ունեցած բաղդդ վայելելու։ Կարող ես ասել, որ քո ունեցածներիցդ ամեն մի ժամանակ ամենախելացի գործածութիւն ես արել։ Ա՛յ մարդ, մի միտք արա, որ շատ ուրիշներն, որ այն էլ չունին, ինչով որ դու պարծենալ կարող ես, միայն թէ ունենային, աւելի աղնիւ, աւելի բարերար, աւելի հասարակաց օգտակար մարդիկ կլինէին աշխարհիս համար։ Ինչո՞ւ ես դու ուրիշներին դատապարտում և ոչ թէ տակաջ քեզ։—

Իսկ ինչո՞ւ համար է աստուածային նախախնամութիւնը

մարդկութեան բարեկամի բարի կամքն՝ այնպէս շատ անգամ անզօր ու ամուլ թողել ու այնպիսի մեծ միջոցներ տուել մոլի մարդու ձեռքը։—Գիտե՞ս իսկապէս, որ այն գերդաստանն, որ այսօր իւր աղքատութեան մէջ՝ ներսից՝ իւր մէջը՝ բաղդաւորուած է, առաքինութիւն և հոգեկան բաղդաւորութիւն կճանաչէը, եթէ որ հարստութիւններով, բարօրուած կեանքի հրապոյրներով ու պատրանքներով շրջապատուած լինէր։ Կարճատես հոդեղէն մարդ, դու գանգատուում ես քո վիճակից, որից ինքդ էլ չես իմանում թէ՝ ինչպէս է աղբերանում քեզ համար բաղդաւորութիւնն ու բարեկեցութիւնն, ու ցանկանում ես, որ նորա տեղը փայլ ու թշուառութիւն քեզ համար ունենայիր։ Հազարաւոր վտառաւոր քանքարներ անյայտ և անօգուտ կերպով թմրած վիճակի մէջ կմնային, եթէ որ կարիքը նոցա չզարթեցնէր։ Հազարաւոր բարերար գիւտեր, մեր չիմացած ու մեզ համար մոռթ բանները դեռ և ևս ծածկուած կմնային անյայտութեան մէջ, եթէ որ սահպողական կարիքը մթութեան խաւարից դուրս չքաշէր, չհանէր։

Զորս կողմդ մի մտիկ տուր ու ցոյց տուր թէ՝ ո՞րն են արդեօք բաղդաւորութեան բարիքն՝ և իրօք այնպէս անհաւասար կերպով են բաժանուած, ինչպէս որ դու կարծում ես քո դժգոհութեանդ մէջ։

Աշխարհիս մէջը չկայ մի չարիք, մի վատ բան, որից որ մի բարիք՝ մի լաւ բան էլ չյառաջանայ. չկայ ոչ մի կարօտ վիճակ ու պակասութիւն, որոյ հետը մի բարիք էլ չլինի։ Ոչ մի երկիր չկայ, որ հաւասար լինի ուրիշ երկիրների՝ բնութեան բերքերովն ու պարգևներովը. բայց ամեն մէկն էլ ունի իւր առանձին և իրան յատուկ գնահատելի ու գրաւիչ կողմերն ու իւր ջոկ լաւութիւններն։ Եւ որովհետև սովորութիւնը շատ հեշտ կերպով է մեզ հաշտեցնում բաւական չարիքների հետ, ամեն մի բնակիչ՝ իւր հայրենիքն ուրիշ երկիրներից գերազանց է համարում, թէև շատ պակասաւոր էլ լինէր բնութեան բերքերի կողմից։ Այսպէս է ամեն մի մարդն էլ, ու նոյնը պէտք է ասէինք ամեն մի մարդու մասին էլ։

Այն ընտանիքը բաւական բանի տէր է, կարծես թէ՝ բաղդաւոր պէտք էր համարէը իրան, ինչու որ պէտք եղածն ունի, պակասութիւն՝ կարօտութիւն չէ քաշում. բայց, կարելի է,

անբաղդ է իւր անդամների վիճակումն. այդ պատճառաւ շատ անգամ նախանձում է այն սիրոյ և միաբանութեան վերայ, որ կայ իրանից աւելի աղքատ մի գերդաստանի մէջ։—Ողորմելի է ամեն մի մարդ, որ սահմանափակ խելք ունի և պէտք է միշտ կարօտ լինի ուրիշների առաջնորդութեանն ու նորանից կախումն ունենայ իւր բոլոր կեանքումը։ Բայց էլի ապահովաւած է այդպիսի մարդը քաղցածութիւնից ու թշուառութիւնից։—Մի ուրիշը կարող էր անպակաս լիութեան մէջ իւր կեանքն անցկացնել, բայց իւր հարստութիւնը քիչ է կարողանում վայելել, որովհետև անդադար իւր մարմնոյ տկարութեան հետ է մաքառում։—Այնտեղ մի երրորդ մարդու ձեռքը պակաս է, շատ կարօտութիւնների մէջ է ապրում. բայց իւր ունեցածն իրան համար բաւական է, որովհետև աշխատասէր է և այս աշխատասիրութիւնը պահպանում է իւր առողջութիւնը։—Մի ուրիշն էլ՝ մեծ անուն, պատուաւոր պաշտօններ, նշանաւոր եկամուտներ չունի, բայց նորա մէջը բնակվում է մի յստակ, մի լուսաւոր խելք ու միտք. նորա ունեցած գիտութիւնները բարձրացնում են իրան ուրիշ շատերից աւելի. նա իւր ղօրաւոր միտքը, բարակ խելքն ու բազմաբեղուն հասկացողութիւնն՝ իւր կենդանի մնասն չէր փոխել անկենդան և կորստական մամոնայի հետ։

Այսպէս ուրեմն՝ ամենիմաստ Աստուծոյ ձեռքն երկրաւոր բաղդաւորութեան բարիքն այնպէս անհաւասար չէ բաժանել մարդոց, ինչպէս որ, առաջին անգամ նայելով, մեզ կարող է երևել։—Այս աշխարհիս վերայ ոչ ոք ամենից հարուստ չէ, ոչ ոք ամենից աղքատը չէ. ամեն մի մարդ ունի դեռ մի բան, որ իրան տրուած է իբրև մի առանձին մնաս. ամեն մի մարդ ունի իւր առաւելութիւնները, որ ուրիշները չունին։ Մի տպիր այդ քան ընդ քան. այնպէս ոչինչ չի քան։ Աստուած ամեն մարդու մի չնչին բան է պարգևել։ Ամեն մի մարդ պէտք է նկատուի իբրև տընտես Աստուծոյ այն պարգևների, որ իրան պարգևած են իբրև իւր մնաս ու բաժինը։ Սորա համար ամեն մեկդ ծառայեցէք ուրեմն միմեանց այն ձիրքովն ու շնորհքով, որ ստացած էք ձեր Ստեղծողից։ Էլ մի գանգատուիլ քո կարծիքով անհաւասար կերպով բաժանուած բաղդաւորութեան բարիքների վերայ։ Մի մոռանալ, որ նա էլ, որին որ դու նախանձում ես, կարող

է գտնել քո մէջդ այնպիսի յատկութիւններ, որ ինքը չունի և ըստ է ցանկանում ունենալ։ Դու նորա հարստութեանն ես նախանձում, նա քո առողջութեանդ. դու ցանկանում ես, որ ունենայիր նորա խելքը, հասկացողութիւնն ու վարքը. նա էլ իր համար ցանկանում է ունենալ քո անհոգ, անզբաղ, մտատանջութիւններից ազատ դրութիւնդ բաղդաւոր անյայտութեանդ մէջ, որոյ մէջ քեզ քո թշնամիներդ չեն հալածում։ Ո՛չ ոք մարդու ոչնչ բան պակաս չէ, բայց ոչն մարդու ոչ բան պակաս է։

Քանի որ աւելի երկար ենք մտածում մարդոց մէջ բաղդաւորութեան բարիքն անհաւասար կերպով բաժանուելուն վերայ, այնչափ աւելի մերձաւոր կերպով ենք ծանօթանում Աստուծոյ անհուն իմաստութեան ու սիրոյ հետ, աւելի հականալով նորա տնօրէնութեան միտքն։ Արուէհաւ աշխարհիս երեսին ոչ մի մարդ չկայ, որ պատճառ ունենար իւր վիճակն անիծելու. այդ այն ժամանակ միայն կարող է լինել, եթէ որ իւր սխալանքովն իւր վիճակն անտանելի արած լինէր իւր համար։ Եւ վերջապէս ո՞վ է աշխարհիս վերայ ամենաբաղքատ մարդն։ Ժպտողն է։—Ո՞վ է ամենահարուստն։—Դա իւր վիճակով գոհ եղողն է։

Գոհ լինելու համար այն երկրաւոր բաղդաւորութեան բարիքներով, որ Աստուծոյ հայրական սէրն ու խնամքն մեզ բաժին է հանել, մտքիդ երբէք պիտի դուրս չգայ այն ճշմարտութիւնը թէ՝ տպրտա բպրտրտրո-ննե-ն էրկրա-որ բարէ-նէրէց անկա՞ծ է։ Ոչ թէ նա է բաղդաւոր, ով որ ամենալաւ բանն ա-նէ, այլ նա, որ ինչն է ամենալաւ։

Եթէ որ մարդկային բաղդաւորութիւնը կախուած լինէր վայելից, վարքից, հարստութիւնից, պատուաւոր պաշտօններից ու մեծ քանքարներից, այն ժամանակ չքաւոր օրական մշակն ամեն անգամ անբաղդը կլինէր, ու միլիոններ ունեցողը՝ միշտ ամենաբաղդաւորն աշխարհիս վերայ։ Ա՛խ, ինչպէս շատ անգամ դորա հակառակն ենք տեսնում։ Ո՛րչափ շատ՝ մեծ ու անուանի մարդիկ գոհ գնացին իրանց հոգսերին ու սրամտութեանը, մինչդեռ ստոր ու անյայտ մարդն իւր դառն աշխատութեան պատուղն ուրախութեամբ վայելում էր։

Դու բպրտրտրո-ննե-ն ես պատռում՝—, դու կարծում ես, քո

ց սիկսւթիւններիցդ շլացած, թէ բաղդաւորութիւնը կգտնես փայլի ու վառքի մէջ։ Բայց վայլն ու վառքը չէ, որ հիմնուած մարդուս բաղդաւորութիւնը։ Դորանք օգուտ անգամ չեն ունենալ, այլ թէ կարողանան օգնել, որ բաղդաւորութեան հասնես, բաղդաւորութեան մէջ լինես, ինչու որ հաղարաւոր մարդիկ կան, որոնք որ բարիքներ ունին, բայց էլի անբաղդ են իրանց ունեցածովն, որոյ համար դու ախ ես քաշում։ Ես բարեվիճակ դրութիւնդ, քո բարօրութիւնդ արտաքին բարիքի մէջ մի պտուիլ, քո սրտիդ բարութեան մէջը պտուիր, քո իմաստութեանդ մէջ, որ քեզ բարձրացնում է այն բանի վերայ, ինչ որ անցաւոր, կորստական բան էր, է և պիտի լինի։

Ունեցածովդ բաւականանալու և Աստծոդիդ քեզ արժանի համարած ու տուած վիճակովդ գոհ լինելու համար, ըս- հաւկայէր ։ պրո-ընեանդ առաւելութիւնները, սորվիր գնահատել քո ունեցած հանգամանքներիդ արժէքն, որոնց մէջ որ գտնվում ես, ու ոտնակոխ մի անիլ ունեցած բարիքդ, որ անկուշտ ու ծակ աչքով միշտ այն բանի եռևից ընկնես, ինչ որ չունիս։ Ես չբաւականանալդ ունեցածովդ, որ քեզ մոլորեցնելով, տանում է նախանձոտութիւնից դժգոհ լինելու ու վերին Տեսչութիւնը անիրաւ կերպով պարսաւելու մոքին, քո անձնասիրութեանդ հետևանքն է, որ ուզում ես աւելի գօրաւոր լինել քո մէջդ, քան թէ քո բանականութիւնդ ու կրօնդ, անսխալ կերպով և պարզ ցոյց է տալի քո թոյլ լինելդ հոգւով ու խելքովդ։ Բարձրացիր հոգւովդ, քո ունեցած վստահութիւնովդ Աստուծոյ վերայ և անսասան հաւատովդ Նորա բարերար անօրէնութեանն, որ դու կօրհնես քո վիճակդ, երբ որ քեզ նման մարդոց շատերի դրութեան հետ քոնը կհամեմատես։—Իրաւ է, դու քո կեանքի մէջն ունիս դժգոհութիւններ, քեզ անհաճոյ բաներ, մի քանի ծանրութիւններ էլ, որոնց տանելն ու դիմանալը քեզ համար դժուար է։ Բայց քեզ լաւ քննիր ու տես թէ՝ քո յանցանքովդ օգնած չես արդեօք այդ վիճակիդ մէջ լինելուդ, որ այդ չարիքը քեզ նեղութիւն է տալիս։ ինքդ քեզ լաւ քննիր, թէ արդեօք փորձել ես արդէն լուրջ կերպով քեզ ազատելու այն բանից, ինչ որ քեզ սխրութիւն է պատճառում։ Եթէ որ այն, ինչ քեզ պակաս է, կամ չունիս, քո իսկ թուլութեան հետևանքն է, քո իսկ մեղքի ապացոյցն է, քո իսկ յանցանքի

վկայութիւնն է, ուրեմն ինչո՞ւ ես պահանջում Աստուածանից, որ հրաշք գործի քո յուղութեանդ՝ կամ քո յանցաւորութեանդ մեծ բարւոյն համար։ — Սրտովդ աւելի չար եղիր, դուրան էլ՝ աշխարհումս էլ քեզ համար աւելի լաւ կլինի։

Բաւական լինելու համար բաղդաւորութեան այն բարիքներովն, որ Աստուծոյ բարութիւնը քեզ պարգեւել է, հէնց +է՞ պէ՞տ-ա՞յ-ը։ Ազնուացու՛ր քո սիրտդ առաքինութիւններով, որ դեռ ևս քեզ պակասում են. ազնուացու՛ր քո խելքդ կարեւոր հմտութիւններով ու փորձառութիւններով։ Աւելացու՛ր քո ունեցածներդ աշխատասիրութիւնով, գործունէութիւնով, կարգասիրութիւնով, խնայողութիւնով. արտաքին շքեղութեան տեղ դի՛ր վերին ասիճանի մաքրասիրութիւն ու մեծ ճաշակ ցոյց տուող պարզասիրութիւնը, շլացնող բանի տեղն՝ օգտակարն ունեցի՛ր։ Ազնուացու՛ր քո տանեցուդդ՝ սիրոյ, յարգանաց և քաղցրաբարոյութեան օրինակովդ, որ դու նորանց տալիս ես ու նորանցից պահանջել կարող ես։ Հեռացու՛ր խոսակցութիւններիդ միջից կոպիտ կերպն, անսիրութեան հոգին՝ ամեն գործերիդդ։ Հեռո՛ւ պահի՛ր քեզ անբարոյական ընկերութիւններից՝ քո կենցաղավարութեանդ, քո վարմունքիդ մէջ ունեցած պատրաստակամ ծառայութիւնով, գրաւի՛ր քո բնակած տեղիդ մարդոց համակրութիւնն, առաջինն եղիր, որ օգնութիւն է հասցնում, և վերջինն, որ օգնութեան է կարօտում։ քո ներկայ դրութեանդ մէջ ամենալաւն եղիր, այն ժամանակ ամենալաւ բանին էլ կհասանես, այսինքն սրտի հանգստութեան, Աստուածանից ու քո վիճակիդդ գոհ լինելուն, մարդոց սիրոյն և վերին Տեսչութեան օրհնութեա՛ն։

Բայց բաղդա՛ւո՛ր-ընկեր բարեկա՛մ պարզա՛ւ-նել կա՛ն, և Աստուած պարգեւում է քեզ արտաքին, երկրաւոր բարիքներից կողմանէ այնչափ, որչափ որ քեզ՝ քո և ուրիշների բարւոյն համար՝ օգտակար կարող են լինել։ Մի՛ քննի՛ր ամենիմաստ Ստեղծողիդ ձեռք առած միջոցներն, որ գործ է դնում աշխարհի բարւոյն համար. մի՛ կասկածի՛ր նորա սիրոյ անչափ ու անսահման լինելուն վերայ. մի՛ երկմտի՛ր հաստատուն հաւատով ապաւինելու նորա Նախախնամութեան, որ քեզ վերայ մտածել է՝ քո աշխարհ ծնելուդդ առաջ։

Խմաստուն կառավարիչ եղիր քո տանդ այն բանով, ինչ որ

Աստուած իւր օրհնութեան լիութիւնից քեզ բաժին է հանել, ու հաւատարիմ եղիր այն փոքր բանի մէջ, որ Աստուած քեզ հաւատացել է ու տուել քո ձեռքդ։ Հաշիւ ու համար տալու օրը կգայ։ Երկնաւոր տէրը մի օր քեզ էլ կասի. «ապրիր ծառայ՝ բարի և հաւատարիմ, որովհետև քիչի մէջ հաւատարիմ եղար, շատի վերայ կարգեմ քեզ։ Մտիր քո Տիրոջ ուրախութեան մէջ»։

Բազդաւորութեան բարիքների մէջ հաւատարիմ, տնտես եղիր, մի թողնիլ, որ իւ չարն գործածուին։ Մի փչացնիլ քո առողջութիւնդ վատ վարքովդ, փափուկ կեանք ծերելովդ, յանդգնութիւնովդ, գոռոզութիւնովդ. մի փչացնիլ քո ունեցած կարողութիւնդ շռայլութիւնով, անկարգութիւնով ու յոյլ կեանքովդ, մի փչացնիլ քո խելքիդ ուժերն անօգուտ ու յիմար բաների վերայ, որոնցից ոչ մի լաւ բան, ոչ մի շահ չէ դուրս գալիս, քո մեծ անունդ, քո ունեցած ազդեցութիւնդ մի բանեցնիլ նորա համար, որ ունայնասիրութիւնովդ աշխարհի առաջ փայլիս, այլ ինչ բարիք որ ստացել ես, լինի քեզ համար մի քանքար, որ պէտք է շահեցնես, գործածելով աշխարհի բարեաց, քո ընտանեացդ բարեկեցութեան ու քո քաղաքակցացդ օգտին համար։

Ո՛վ Աստուած, ամենայն բարի և կատարեալ պարգևների տուիչ, որոյ ողորմութիւնդ անչափ է և գթութիւնդ ոչ բառնալի անբաժան, իմաստուն կարգաւորիչդ աշխարհի։ Քո ոչ մէկ արարածդ չես մոռացել, ամեն մէկին պարգևել ես այն կարողութիւնն, որ թէ՝ իրան և թէ ուրիշներին բաղդաւոր անի։ Զարմանալի կերպով բազմատեսակ են այն տուրքերն ու պարգևները, որ Դու բաժանել ես, բայց հէնց այս քո պարգևած տեսակ տեսակ բարիքներովդ ես կապում աղգեր աղգերի հետ, մարդոց իրանց նման մարդոց հետ, ու դորանով այնպէս ես արել, որ նորանք ամենքն էլ միմեանց հարկաւոր են, ամենքն էլ միմեանցով պիտի կարողանան միայն կառավարել ու մտկանացու մարդոց առաջնորդել միմեանց հետ վոխադարձ բարեհամբութիւն, իրարից կախում՝ ու միմեանց դէմ պարտաւորութիւն ունենալու։ Մէկի ձիրքը միւսի համար պէտք ու կարիք է, ուր որ մէկը մի նեղութիւն է քաշում միւսները պէտք է օգնեն։ Ոչ ոք ամեն բան չունի, ոչ ոք կա-

տարեալ չէ, ոչ մի մարդ՝ առանց մի ուրիշ մարդու կարօտելու՝ կառավարուել չի կարողանար։

Բաւականանալով ու գոհ լինելով այնմով, ինչ որ Դուս ինձ էլ իմ ընտանեացս հետ պարգեւել ես, ջանք անենք, Քո մեզ պարգեւածիցդ մեր անմահ հոգւոյ համար ամենամեծ օգուտը դուրս բերել, ու միևնոյն ժամանակ զգուշանալով ի չարն գործածելուց. այդ արած կլինինք, երբ որ առաջացրած կլինենք ընդհանուր գոհունթիւն և բաղդաւորութիւն։ Ինչքի՜ է մեզ պէտք երկրաւոր բաղդաւորութեան բարիքների ամենաառատ լիութիւնն, երբ որ իմաստութեամբ գործ ածելը չգիտե՞նք։ Բայց ով որ Քեզ, իմ Աստուած, իւր սրտումն ունի, լի է անմահ յուսով։

(Թարգմ. գերմաներէնից) Գրիգոր Եպիսկոպոս Աղափիրեանց.

ՁԱՌ ՎԵՐԱԾՄԱՆ ՍՐԲՈՑ ԽԱՉԻՆ։

—

Հաւաքուելով այս սուրբ տաճարիս մէջ Ցիրոջ Սուրբ Խաչին երկրպագութիւն անելու համար, դուք կցանկայիք անշուշտ, եղբարք, լսել մի բան նորա վերայ խաչուածից ձեզ խրատ լինելու համար։ Նա լուռ չի մնալ ու կխօսի ձեզ, ինչ որ պէտք է ձեզ համար, եթէ որ ցանկութիւն ունիք լսելու։ Խաչուածի վէրքերի վերայ, որ միայն նայենք ուշադրութեամբ, շատ բան կլսենք ու կհասկանանք։ Եւ յիրաւի՛ Նա իւր վէրքերովը շատ և մեծակշիռ բան է ասում ամեն մի մարդու։ Եւ ահա նորա ասածն. «ով որ ո՞ւզում է իմ ետևիցս գալ, ինքն իրան պէտք է ուրանայ և վէր առնի իւր խաչն ու իմ ետևիցս գայ»։

Ոչ թէ մէկն, այլ շատ անգամ, կարծում եմ, կարդացել էք ձեր տանը սուրբ Աւետարանի մէջ անձնուրացութեան մասին, և նոյնպէս շատ անգամ լսել էք Աստուծոյ սուրբը տաճարում մարդուս իւր անձն ուրանալու համար. ուրեմն նոր բան չէ, ինչ որ լսում էք, այլ հին՝ արդէն յայտնի բան, և կարելի է, այն բանն է, ինչ որ ամենևին օտար չէ ձեր մտքին և զգացմունքներին։ Բայց այդ մեզ համար ոչ նոր բանն, ամեն ժամանակ պահանջում է մեր ուշադրութիւնն, և առաւել այսօր, որ

երկրպագութիւն ենք անում և համբուրում նորան։ Նաև հասկանանք, եկեղեցի, Քրիստոսի պատուէրի միտքը։

Երբոր Տէրն մեր Յիսուս Քրիստոս կանչում է մեզ գնալ իւր հետևից, այդ նշանակում է, որ մենք գնում ենք մի ուրիշ հետևից։ Ո՞ւմ հետևից ենք գնում և ո՞ւր։ Մենք ունինք երեք գլխաւոր ճանապարհներ։ Մէկով գնում ենք դէպի զգայական զուարճութիւնները ու վայելչութիւնները, միւսով՝ դէպի երկրաւոր գանձն ու հարստութիւնն, երրորդով՝ դէպի պատիւն ու փառքը։ Ճանապարհները միատեսակ չեն, այլ ջոկ ջոկ տեղեր են տանում մեզ, բայց գլխաւոր կէտն, որտեղից որ սկսվում է,—մէկ է—այդ՝ մեր ինքնատիրութիւնն է, և ընդհանուր սահմանն, որտեղ որ միաւորվում են մեր ճանապարհները,—դէպի մեր հոգւոյ կորուստը հասնելու տեղն է։ Յաւ չի՞ արդեօք մեր Փրկչին տեսնել մեզ, որ գնում ենք մարմնոյ և աշխարհի ճանապարհներով դէպի մեր կորուստը։ Յաւով զգաստանալ չինելով մեր կուրութեան վերայ, նա իրրև Աթարիչ, առաջնորդ ու թագաւոր ազատ արարածներիս, չէ ուզում, որ բռնի իշխի որ և իցէ մարդու վերայ. այլ հրաւիրում է մեզ գնալ իւր հետևից։ Ուրեմն ի՞նչպէս պէտք է գնանք նորա հետևից. առանց որևիցէ տիպման. սորա համար նա ասում է՝ «ով ոք կամենայ։ Իրրև խոստաստութեան և սիրոյ թագաւորութեան հիմնող ու հաստատող, նա չէ կամենում, որ մէկը մտնի իւր թագաւորութեան մէջ պատժից վախենալու համար. «ով ոք կո՞ղնայ։ Այդպիսի հրաւէրից էլ կարճ բան կարող է արդեօք լինել, ով չի գնալ Քրիստոսի հետևից։

Փրկիչն մեր Յիսուս, կանչելով մեզ գնալ իւր հետևից, պահանջում է մեղնից անձնուրացութիւն. «ով ոք «ողո՞ է ի՛մ հետևից գալ, ննջ «ուրանայ ի՛ւր անձէ։ Ի՞նչ է նշանակում ուրանալ իւր անձը։—Այն չէ, որ մէկն ինքն իրան ամենևին չսիրի, ինչու որ Տէրը մեր ունեցած սէրը դէպի մեր անձը չափ է համարում, որով չափվում է մեր սէրը դէպի մեզ նման մարգը, դէպի մեր ընկերը, «էրէ «ո ընկերդ «ո անձիդ պէս։ այդ պատուէրը տալիս է մեզ նորա համար, որ պաշտելու չափ չհետևենք մեր խելքին, մեր իմաստութեանը, մեր արժանաւորութիւնների, մեր բարիքի ու մեր վայելչութիւնների համար հոգի չտանք։ Մեր ունեցած խելքը, փառքը, հարստութիւնը, մեր առաքինու-

թիւնն, այդ բոլորը պէտք է մեր գլխից հանենք։ Մեր խոնարհութեան և նուաստութեան զգացմունքը, մեր անարժանութեան և տառապելութեան զգացմունքը,—ահա ինչ պէտք է զբաղեցնի մեր սիրտն։ Իսկ պատուոյ և աղնուութեան զգացմունքը ի՞նչ նշանակութիւն պէտք է ունենայ։ Ա՞խ, ինչպէս շատ վնաս են մեզ տալիս այդ մեր զգացմունքներն անձնուրացութեան գործի մէջ։ Այդ մեր զգացմունքը չէ՞ արդեօք, որ պատճառ է դառնում մեզ հպարտանալու անաղնիւ մարդոց առաջ։ Այդ մեր զգացմունքը չէ՞ արդեօք, որ առաջացնում է մեր մէջն անհամբերութիւն և դիւրագրգռութիւն, երբ որ վիրաւորանք, անպատուութիւն և զրկանք ենք տեսնում։ Մի՞թէ նա չէ, որ սուրբը է հանել տալի պատեհաններից։ Չէ՞, մեր այդպէս անուանած պատուոյ և աղնուութեան զգացմունքները դժուար է մեզ գնալ Նորա հետևից, Որ ասում է՝ ինչպէս ասվէ՞ր է, որ հեղ եմ ա՛ռ ապրով խոնարհ, և Որ պատուիրում է. սիրեցէ՛ք ձեր ընձայիչներին, ձեզ ատողներին լա՛ւ-ընե՛ն ասէ՛, ձեզ անիծողներին օրհնեցէ՛, աղօ՛թ ասէ՛ ձեզ նեղո՛ղ-ընե՛ն ա՛ռ-ողների համար։ Ջրիսոստոմին հետեւողը, Նորա հետևից գնացողն, ոչ մի քայլ չպէտք է յետ մնայ իւր Առաջնորդից։ Ամենայն երկրաւոր և աշխարհային բանը մի կողմ պէտք է դնի, եթէ որ ուզում է իւր երկնաւոր, իւր աստուածային Ուսուցչին արժանաւոր հետևող ու աշակերտ լինել։

Ինքն իրան կամ իւր անձն ուրանալու համար հարկաւոր է մեզ արհամարհել մեր իմաստութիւնն, եթէ նա մեծ բան է երևում մեր աչքին ու մեզ հպարտացնում։ Պէտք է չնայինք մեր պատուոյ վերայ, եթէ նա խաբում է մեզ ու ճանապարհից հանում, հարկաւոր է մեզ որ սառն աչքով նայինք բոլոր մեր բարիքների ու վայելչութիւնների վերայ, եթէ արգելք են լինում մեր մտքերին վերաբերելու դէպի երկինք։ Հնարաւո՞ր բան է արդեօք այդ անել։ Բայց մի՞թէ մենք չենք անում նոյնպիսի անձնուրացութիւն, երբոր գերի ենք դառնում աշխարհին ու մեր մարմնոյն։ Արդեօք շատ անգամ չէ՞նք զոհում մենք մեր խելքն ու խղճմտանքը գարշելի ցանկութեանց։ Արդեօք շատ անգամ չէ՞նք արհամարհում մեր կեանքը պատուասիրութեան և փառասիրութեան համար։ Արդեօք թանկ չէ՞ նստում մեր վերայ այժմեան դարուս մէջ պատշաճից դուրս

չգալը, Հիշատ բան է արդեօք ճշտիւ կատարել այն պահանջնելն, որ նորաձևութիւնն ասուած նոր հարկի պէտքերն է մեր առաջը դնում։ Մենք չենք նկատում մեր անձնուրացութիւնը. բայց նա մեր մէջն է և կոչվում է աշխարհի անհրաժեշտ պիտոյք և կարևորութիւն։ Կամ մի՞թէ չէք կարդում ու չէք լսում, թէ ինչպէս շատերը մոռանում են իւրեանց պատիւն, ընտանիքն, ունեցած չունեցածն և մինչև անգամ կեանքն, երբոր ընկնում են կրակի մէջ՝ իւրեանց ընկերին՝ կամ իրանց նման մարդոց այրուելուց փրկելու համար, կամ ջրի մէջ՝ խեղդուելուց ազատելու համար։ Եւ ազատում են։ Մի կարծէք, որ այդ ընկերին, կամ իրանց նման մարդոց ազատողները ուրանում են իրանց անձը որ և իցէ շահասիրական ակնկալութիւնից և նպատակից դրդուած. ո՛չ, նոքա յուզվում են և գործում միայն դէպի մարդկային ազգն ունեցած սիրով։ — Եա՛ շատ են, եղբա՛րք, անձնուրացութեան փորձեր։ Այդ փորձերն անկարելի բան չեն։ Եւ կարիքը, կամքի հաստատ ոյժն և առողջ բանականութիւնը կարող է անել մարդուս անձնուրաց, մանաւանդ կենդանի հաւատը դէպի Ցիսուս Քրիստոս։ Ջերմեռանդ սէրը դէպի Նա, և հաստատ յոյսը Նորա ամենակարող զօրութեան վերայ, որ օգնում են Աստուծոյ շնորհքով։

Միւս պայմանն՝ վէր առնէ ի՞նչ խաչը։ Բայց ինչու Նորա խաչը չէ, այլ իւր խաչը. նորա համար, որ Նորա խաչը ոչ ոք չէ կարող տանել բացի իրանից։ Ամեն մի մարդ ի՞նչ խաչը։ Ով որ ուրանում է իւր անձն, նա տէր է դառնում նոր մոքերի, նոր զգացմունքների և նոր գործերի, և բոլորովին տարբեր այնպիսի մոքերից, զգացմունքներից և գործերից, որ ունէր նա մինչև անձնուրացութիւնն. և այդպէս բոլորովին փոխուիլն է իւր խաչն, որ առնում է։ Այդ բոլորովին տարբեր և բոլորովին ուրիշ կերպով մտածելն, զգալն և գործելն ամեն մի մարդու համար ի՞նչ խաչն է, ինչպէս որ ամեն մի մարդ իւր կերպարանքն ունի և ուրիշին չէ նմանում։ Այսպէս կայ մարդ, որ առնում է խոնարհամտութեան և հեզահոգութեան խաչն, որ իւր սրտից հանի դէնն ջղի մեծամտութիւնը. մի ուրիշն առնում է աղքատութեան և մուրացկանութեան խաչն, որ ոսնակոխ անի իւր շահասիրութիւնն, երրորդն առնում է

միայնութեան, լռակացութեան և ողջախոհութեան խաչն, որ իւր մարմնոյ խաղալիքը չդառնայ: Ամեն մի առաքինութիւն, որ դնում ենք որ և իցէ մոլութեան տեղն, մի խաչ է, որ արնկում ենք. ինչու որ շատ դժուար բան է խոնարհ, հեզ, համբերող և հնազանդող լինելն Աստուծոյ կամքին, ինչպէս որ հեզ ու խոնարհ, համբերող ու հնազանդ է Աստուծոյ Որդին իւր երկնաւոր Հօրն: Այդ բանն անելու և լինելու համար շատ մեծ աշխատութիւններ ու շատ ճիգ թափել պէտք է, շատ ու շատ զոհողութիւններ անել: Այս վիճակի մէջ մարդուս պէտք է մնքառել միշտ և անդադար իւր կրքերի ու ցանկութիւնների հետ, այս դրութեան մէջ մարդս պէտք է անդադար հսկի իւր անձի վերայ և ամեն մի ժամ խնդրի երկնաւոր Հօրից, որ իւր զօրութիւնը մեր տկարութիւնների մէջ կատարուի: Այսպէս եղբայրք, անձնուրացութիւնն է խաչ, որ ընդգրկում է մարդուս բոլոր գոյութիւնն և շարունակվում է նորա բոլոր կենաց մէջ:

Ե՞վ ո՞նի՞ կ՚ խաչը: Բացի նորքին խաչերից կան նաև արտաքին խաչեր: Ով որ ուրանում է իւր անձը, նա պէտք է բարի հոգւով և ուրախ սրտով ընդունի զրկանքների և կորուստների, թշուառութիւնների և դժբաղդութիւնների խաչն, երբ որ նորա դրկվում են իւր վերայ: Արտաքին խաչերը միատեսակ չեն, այլ ամեն մի հետևողինն իրանն է: Մէկ ուրիշն աշխարհային ունայնութիւններն արհամարհելուն համար ենթարկվում է ուրիշների ծաղրին, իսկ միւսը ճշմարտութեան համար զրկվում է տեղից ու պաշտօնից, մէկ ուրիշը փորձվում է հիւանդութիւնով, իսկ մի ուրիշը կորցնելով իւր ծնողքը, կամ իւր ունեցած չունեցածը: Զկայ ոչ մի հետևող Քրիստոսին, որ կրի այնպիսի խաչ, որ իւր մարդկային ուժից բարձր լինի: «Հա՜ապաչ է Աստուած, որ չի տեսել Յեղ՝ Յեր ո՜ժից բարձր փորձութեան մէջ»:

Բայց ինչու՞ համար պէտք է տանենք դառնութիւնների և դժբաղդութիւնների խաչը: Մի՞թէ չի կարելի լինել առանց վշտերի: Չէ՞ կարելի. «Ինչո՞ որ շատ նեղո՜ւն՜անէրով», պէտ է ծեղ մտնել Աստուծոյ արքայութեան մէջ»: Չէ՞ կարելի, որովհետև մենք ամենքս, բացառութիւն չանելով նոյնպէս և առաքինի մարդոց, մեղաւորներ ենք. բայց մեղաւորներն արդար դատաստանին համեմատ՝ պէտքէ պատժուին կամ այս կեանքում, կամ ապա-

գայ կեանքում: Իսկ այժմ դատեցէք արդեօք ուղիղ լաւ չէ, որ այս կեանքում մեր մեղքի համար պատիժ կրենք, քան թէ հանդերձեալ կեանքում: Մխիթարական չէ արդեօք, որ խմելով դառնարկենք ժամանակաւոր դառնութեանց բաժակը, քանթէ ենթարկուենք յաւիտենական տանջանաց: Ամենասուրբ մարդիկ, ղգալով իւրեանց մեղքերի ծանրութիւնն, և սարսափելով զժոխային տանջանքների վերայ մտածելուց, աղաչում էին Տիրոջ, որ Նա ենթարկի իրանց ժամանակաւոր չարչարանքներին: «Ո՛վ Տէր, փոյթ ընդ ո՛ւ-ին, փոյթ եմ երկնաւո՛ր-ին ո՛ւ-երա՛»:

Մի՛ւս կողմից, խաչը բժշկում է հիւանդութիւններ, որ ծնեցնում են մեր հոգւոյ մէջ մեղանից սերուած բաղդաւորութիւնն: Խմանո՛ւմ եք արդեօք, ինչ է անում բաղդաւորութիւնը մարդու հետ, ինչպէս փոխում է նորան: Եթէ մէկին հանում է սուր վիճակից և դնում հասարակական ծառայութեան բարձր աստիճանի վերայ, անում է նորան մեծամիտ և անմերձենալի. իսկ եթէ մէկին պարգեւում՝ աղքատի ունեցած չնչին գումարի տեղ՝ ոսկով բեռնած նաւ, անում է նորան քարասիրտ և ժլատ: Արդեօք նա չէ, որ ծանօթացնում է մեզ վաւիլասիրութեան և շռայլութեան հետ և քաց է անում անառակութեան բնակարանի դուռն: Արդեօք նա չէ, որ բերում, բնակեցնում է մեր մէջ մոռացութիւն Աստուծոյ մասին և արհամարհանք դէպի մեր մերձաւորը՝ կամ ընկերը: Մենք կկորչէինք, եթէ որ աշխարհիս վերայ բաղդաւորութիւնը մշտական և անփոփոխ լինէր մեզ համար: Բարեպաշտ մարդկանցից էլ շատերը հաստատ չէին մնալ, կարելի է, հաւատոյ և առաքինութեան մէջ, եթէ որ նա միշտ և անդադար փաղաքշէր մեզ և լցնէր իւր պարգեւներով. բայց մեր բաղդին է, որ նա անհաստատ է, մեր բաղդին է, որ Աստուած ղրկում է մեզ չարչարանքների, դառնութիւնների և վշտերի խաչը: Նա նորոգում է մեր մէջ այն, ինչ որ վնասուած ու խանգարուած է մեր ինքնաբաւականութիւնով. բժշկում է այն, ինչ որ մեր մէջը ցաւագարուած է. սպիտակ է անում այն, ինչ որ սևացած է: Այսպէս հպարտ մարդը թշուառութեանց ճշման տակ խոնարհութեան և հեղութեան դգացման է գալիս, խստասիրտը ամրվում է, հեշտասէրն անիծում է իւր անփոյթ և անհոգ կեանքն՝ և խօսք է տալիս ապրել ժուժկալութեամբ, անաղտ ու անկարգ մտածմանց

ու լեզուի տէր մարդը խոստովանուէ իւր մեղորութիւններն, և տարաճվուէ Խաչելոյ առաջ՝ ու ղղման արտասուքներ թափուէ։ Կարճն ասեմ, ով որ մի ժամանակ մնուէ խաչի վարժատան մէջ, այնտեղից դուրս է գալի և աւելի խելօքացած և աւելի իւր վարքն ուղղած։

Տեսնո՞ւէք, ով քրիստոնեայ եղբարք և քորք, որպիսի օգուտ է բերուէ մեզ խաչը։ Սուրբ մարդիկն, երբոր իրանց վերայ առնուէ էին խաչն՝ ուրախանուէ էին, երբ որ կրուէ էին՝ պարծենուէ էին. իսկ երբ որ ցած էին դնուէ՝ տրտմուէ էին. բայց մենք ընդհակառակը վախենուէ ենք խաչի մինչև անգամ ամենափոքր ծանրութիւնից, ու տրտնջուէ ենք, երբ որ մեզ վերայ գալիս է որևիցէ նեղութիւն։ Մրմէք այսպէս պէտք է գնալ Քրիստոսի ետևից։ Մրմէք այսպէս է հարկաւոր խոստովանել մեր հաւատը դէպի մեր Փրկիչը։

Ուրեմն վեր առնենք անձնուրացութեան խաչն ուրախութեամբ, ու կրենք շնորհակալութեամբ և համբերութեամբ։ «Ի՛մ լա՛ծ ա՛պղը է, և ի՛մ բե՛ռս նե՛ղն է», հաւատացնուէ մեզ Ինքը մեր Փրկիչը։ Ամէն։

(Թուրք. Ռուս.) Կարապետ Գ. Տէր Յակոբեանց Ազացի.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՌՈՒՍԱՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԸ *).

Հոգևոր Դպրոց են կոչվում այն դպրոցները, որոնք չորս դասարանական դասընթաց ունին և ընդունում են իրանց մէջ ուղղափառ դաւանութեան հոգևորականաց որդիքը տարրական կրթութիւն տալու նոցա. ուրևմն դոցա նպատակն է յիշեալ դասակարգի երեխաներին տալ տարրական ուսում և կարևոր կրթութիւն։ Թէպէտ և կանոնին համաձայն պէտք է ընդունուին այդպիսի դպրոցներում միայն հոգևորական կոչմանը պատկանող դասակարգի որդիները, բայց միևնոյն ժամանակ ընդունվում են և ուրիշ դա-

(*) Վերցրուած տեղեկութիւնները հանած եմ արքունի դպրոցաց ընդհանուր ծրագրից։ Թարգմ.

սակարգերի որդիք Թոշակով, եթէ դրքա պատկանում են Ռուս դաս-
նութեան։ Ցիշեալ դպրոցների դասընթացն աւարտողները կարող են մըտ-
նել հոգևոր սեմինարեաները։ Այդ կարգի դպրոցներ գտնվում են թէ նա-
հանգական և թէ գաւառական քաղաքներում։ Այդպիսի դպրոցների դա-
սընթացն աւարտողները՝ ինչպես և չաւարտողները, ստանում են իրենց
գիտութեանն և վարքին համեմատ վկայագիր դպրոցի վարչական անդամ-
ների ստորագրութեամբ։ Նորա՝ որոնք աւարտել են դպրանոցի ամբողջ դա-
սընթացը, և չին մտած հոգևոր սեմինարիայ, քաղաքական ծառայութեան
մէջ մտնելու ժամանակ, եթէ վայելում են ծագման իրաւունք, չեն հա-
թարկվում այլ ևս քննութեան, առաջին աստիճան (чинъ) ստանալու հա-
մար։

Այդպիսի դպրոցներն ունին իրենց մօտ հասարակաց համար բնակարան-
ներ, որոնց մէջ ընդունվում են կամ բոլորովին առանց թոշակի և կամ
պակասագրած թոշակով տեղական հոգևորականների որբ երեխաները, ինչ-
պես և չքաւոր հոգևորականներինը՝ եթէ որ ունենում են դրքա գերա-
զանց վարք ու բարք և լինում են յառաջադէմ ուսման մէջ։ Տեղական
հանգամանքներին նայելով աշակերտներն ընդունվում են կամ լիաթոշակ
գիշերօթիկներ և կամ այնպիսի գիշերօթիկներ, որոնք չեն ստանում հա-
գուստ։ Ընդունելութեան համար խնդրագիրը տրվում է յանուն տեսչի,
որոյ հետ ներկայացնում են նոյնպէս ծննդական վկայագիր և կամ թէ
չափաբերական դրքից քաղուածք իրենց ծննդեան վերաբերեալ։

Այդպիսի ուսումնարանների Առաջին դասարանն ընդունվում են 10—
12 տարեկան երեխաներ, որոնք կարողանում են կարդալ և գրել ռուսե-
րէն, և միայն կարդալ սլաւոներէն (եկեղեցական լեզու)։ պէտք է գիտե-
նան դրքա հասարակեալ աղօթքները, քրիստոնէական վարդապետութեան
տարերքն և չորս գործողութիւնը թուաբանութիւնից։ Կարճ ասել հոգևոր
դպրոցի Առաջին դասարան մտնելու համար աշակերտը պէտք է իմանայ
մերձաւորապէս այն ամենն, ինչ որ ուսանում են մեր երեք տարուայ դա-
սընթացով ծխական դպրոցներում։

Հոգևոր սեմինարիաներ կամ թեմական դպրանոցներ։

Թեմական դպրանոցի լիակատար դասընթացն աւարտողները՝ իրենց յա-
ռաջադիմութեանը նայելով, բաժանվում են երկու դասակարգի։ Առաջին
կարգին համեմատ աւարտողները ստանում են ուսանող անունը (студе-
нтъ)։ Թեմական դպրանոցի ուսանողները հոգևոր ատեանների և հոգե-
ւոր դպրոցների ծառայութեանը մտնելու ժամանակ, նախապատիւ են հա-
մարվում նոցանից՝ որոնք չեն ստացել «окончилъ курсъ»։ Եթէ երբ որ
կամենում են մտնել քաղաքական ծառայութիւն ընդունվում են XIV կար-
գի աստիճանով, առանց ծագման պահանջութեան։

Երկրորդ կարգի աշակերտները՝ որոնք ստացել են թեմական դպրանոցի
դասընթացն աւարտելու գոհացուցիչ վկայագիր առանց արժանանալու «окон-

չենթ կոչման, քաղաքական ծառայութիւն մտնելու ժամանակ, եթէ ունին ծագումն կամ արտօնութիւն ծառայութեան, ընդունվում են ներգործական ծառայութեան մէջ և ըստ զօրութեան օրինագրքի III հատորի 593 յօդուածի առանում են աստիճան որոշեալ ժամանակին ծառայելուց զկնի։ Թեմական դպրանոցում աւարտողների վկայագիրը (аттестатъ) ի նկատ է առնվում հոգևոր ակադեմիայում և ուրիշ բարձր ուսումնական հիմնարկութիւններում, երբ այդպիսի վկայագիր ունեցողները կամենում են շարունակել իրենց կրթութիւնը յիշեալ բարձր հիմնարկութիւններում։ Հանրակրթիչ ունման դասընթացն աւարտողներն ընդունվում են համալսարանների և լեզիօններում, երբ հմտատօտ հարցաքննութիւն են կարողանում տալ երկու հին դասական (կլասիքական) լեզուներից, Ռուսաց լեզուից և մաթեմատիկայից։

Թեմական դպրանոցները (սեմինարիաները) ընդունվում են հետևեալ կանոնները։—

Ամենայն տարի ընդունվում են Ռուս դաւանութեանը պատկանող ամենայն դասակարգից պատանիներ թեմական դպրանոցներում, թէ հարկաւոր եղած ուսումն ստացած լինին ուսումնարաններում և թէ տանը՝ առանձին պարապելով։ Ընդունվում են թեմական դպրանոցի թէ Առաջին դասարանը, և թէ հետևեալ դասարանները, բացի վեցերորդ դասարանից։ Առաջին դասարանը մտնելու համար պահանջվում է նախորոշ հասակ։ Աստուածաբանական առարկաներն ուսանելու համար ընդունվում են հինգերորդ և վերերորդ դասարաններում այնպիսիները՝ որոնք աւարտել են մի որ և է ուսումնական հիմնարկութեան դասընթացը, նաև այնպիսի անձինք, որոնք ստացել են առ տնին կրթութիւն և չեն փոքր տասնևութն տարեկանից։ — Առաջիններին քննվում են աստուածաբանական այն առարկաներից՝ որը չեն ուսանվում աշխարհական ուսումնարաններում. իսկ վերջիններն ենթարկվում են քննութեան՝ թեմական առաջնորդի տեսութեանը համեմատ։

Խնդիրները տրվում են յանուն տեսչի (ректоръ)։ Օգոստոսի մէկիցն ոչ ուշ՝ որի հետ և վարուց և յառաջադիմութեան վկայագիրն՝ եթէ դպրանոց մտնողն աւարտել է որ և է հիմնարկութեան մէջ, իսկ եթէ առանին կրթութիւն է ստացել՝ այն ժամանակ միայն ծննդական վկայագիրը խնդրի հետ կցեն։ Խնդիրներն ընդունվում են Յունիսին և Դեկտեմբերին, կամ Սեպտեմբերին և Յունվարին։ Սեմինարիաներում լինում են արքունի հաշիվով սովորողներ, գիշերօթիկ թոշակառուներ և երեվելիներ։ Առաջիններից մէջ ընդունուած են որբեր և չքաւորների երեխաները։ Վճարովի գիշերօթիկները վճարում են տարեկան 90 րուբլի ամենայն ծախուց համար. իսկ այն գիշերօթիկները՝ որ միայն կերակուր են ստանում, վճարում են տարեկան 45 ր. կամաւոր երեվելիները ուսանում են առանց վճարի։

Ո՜տանէկէ ատ՜ատկայից Ձրտգիները հոգեւոր ընկերական պարտաւորութեան համար.

Ա՜ռաջին պատարան.

Կրճ.— Հին և Նոր կտակարանի պատմութիւնը Ռուգակովի ձեռնարկի վերայ. ընդարձակ քրիստոնէական վարդապետութիւն. Մեկնութիւն և բացատրութիւն ժամասացութեան, պատարագի արարողութեան և եկեղեցական կանոնագրութեան. վերջինս անցնումն հետևեալ ձեռնարկներով.— «Եկեղեցական կանոնագրութիւնը սովորելու համառօտ ձեռնարկ» Միխայլովսկի քահանայինը. «Համառօտ տեսութիւն ժամերգութեան գրքերի» — Նիկոլսկի քահանայի. «Եկեղեցական կանոնագրութեան համառօտ ծրագիր» — գործ Նօրդօվ աւագ քահանայի։

Ռ՜ուսաց լեզու.— Քերականութիւն Ռուս լեզուի ամբողջապէս և լիակատար։

Լ՜ատինական լեզու.— Գրել ըստ թելադրութեան, հիմնաւոր գիտութիւն բառակազմութեան և համաձայնութեան. Թարգմանութիւն Թեթևագոյն յօդուածների՝ հռովմէական վիպագրութիւններից (Կորնէլիոս Նեպոտ, Կուրցիոս, Իւլիոս և կեսար) և Ֆէդրայի առակները։ Վերջինս հասկանալու համար, տալ ծանօթութիւն չափաբերութեան կանոնների մասին։

Յ՜ունաց լեզու.— Լիակատար և մանրամասն գիտութիւն բառակազմութեան և համաձայնութեան գլխաւոր կանոնաց, այնպէս որ դիւրին յօդուածներ թարգմանելը կարելի լինի։ Կ՜ենդէ քերականութիւնից թարգմանել կրթութիւնները ռուսերէնի. Թարգմանել նոյնպէս Ղուկասու աւետարանը և Գործք Առաքելոցը ռուսերէն։

Աշ՜խարհագրութիւն.— Հիմնաւոր գիտութիւն ընդհանուր և Ռուսիոյ աշխարհագրութեան. առանց դժուարութեան գտնել քարտէզի վերայ իւրաքանչիւր պետութիւն և նշանաւոր քաղաքները, գետերը և այլն, համր քարտէզի վերայ կարողանալ որոնել և գծագրել կանոնաւորապէս Ռուսաց պետութիւնը և Ռուսիայի նշանաւոր տեղերը։

Երկրորդ պատարան.

Առաջին դասարանում՝ անցածից զատ՝

Կրճ.— Ս. գրքի մասին եղած գիտութիւնից.— պատմական տեղեկութիւն Ս. գրքի մասին.—յաժանում Ս. գրքերի գրութեան, ժամանակի և բովանդակութեան համեմատ. ծանօթութիւն կանոնական և Պարականոն գրքերի մասին։ Թուում և անուանում Հին և Նոր կտակարանի օրէնսդրական գրքերի, տեղեկութիւն Հնգամատեանից Հեղինակի մասին. Թէ ինչպէս է անուանվում Ծննդոց գիրքը Հրէից և Յունաց Աստուածաշնչի մէջ. Նորա պարունակութեան էական առարկան և այն ժամանակամիջոցը, որ պարունակում իւր մէջ նորա բովանդակութիւնը.— բաժանել նորան մասերի և իւրաքանչիւր մասի ընդհանուր բովանդակութեան ծրագիրը, գրութեան ժամանակը, տեղը և նպատակը. Հնգամատեանի միւս գրքերն ևս

պէտք է այս օրինակով իմաստասիրել.— Ելից, Ղևտացւոց, Թուոց և Երկրորդ Օրինաց. Ընթերցումն Հնգամատեանի հանդերձ մեկնողական բացատրութեամբ։

Գրչանուէրն Ռուսաց։—Տեսութիւն գրականութեան կամ դպրութեան Ռուսաց. Ստայիւնկինի ձեռնարկով։

Պատմութիւն.— Հին և Միջին պատմութիւն մինչև կարլոս Մեծը՝ Իլովայսկու ձեռնարկով (Միջին հասակ), պէտք գիտենալ ճշդիւ ըստ այնմ ժամանակագրութիւնը և ցոյց տալ պատմական քարտէզների վերայ նշանաւոր տեղորայք։

Հնդոհռչիւ (Ալգեբրայ).—Սահմանել ձեռնարկի վերայ գիտենալ առաջին ութ գլուխը։

Լատինական լեզու.—Բացի քերականութիւնը լիակատար կերպով իւր բոլոր մասերի վերաբերմամբ գիտենալուց, Ցակովը Սմիրնովի լատիներէնի համար յօրինած «Ընդարձակ ձեռնարկով» թարգմանել Տիտուլիվեպիդ (fasti) մանրակրկիտ վերծանութեամբ իմաստասիրել վիճչափեանի (гекзаметръ) տեսութիւնը. վերջապէս՝ գրաւոր կրթութիւն՝ թարգմանելով Ռուսերէնից լատիներէն։

Յունարէն.—Ուսանել ըստ Կիւնէրի ձեռնարկի (թարգմանութիւն Նօսովի) հանդերձ վերծանութեամբ կանոնաց՝ թարգմանելով Ռուս լեզուից Յունարէն, այն կրթութիւնները, որոնք գտնվում՝ են ձեռնարկի մէջ, և թարգմանել կարողանալ, Քսենոֆոնտի Անաբազիսից։

Ֆրանսերէն և Գերմաներէն։—Ըստ կանոնի ընթեռնուլ և գրել, ուսանել բառակազմութիւնը համեմատ ձեռնարկներիս.— «դասագիրք Ֆրանսիական լեզուի գիմնազիական ստորին դասարանների համար» Մարգոյ։ «Դասագիրք Գերմանական լեզուի ուսուցման գիմնազիոնների ստորին դասարաններում»—Հանեման։

Երրորդ դասարան

Բացի՝ Առաջին և երկրորդ դասարաններում ասանգածներից —

Կրօն.—Ս. գրքի մասին եղած դպրութիւնից պահանջվում է գիտենալ Հին կտակարանի պատմական գրքերի բովանդակութիւնը.—օրինակ՝ Ցեսուէ Նաւէայի գրքի մասին, (գրքերը գրողների մասին տեղեկութիւն, Հայեացք նոցա բովանդակութեան վերայ և բաժանումն մասերի. Գրութեան ժամանակը, տեղը և նպատակը); Ըստ այսմ եղանակի իմաստասիրել և միւս գրքերը.—Դատաւորաց, Հռութայ, Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ գրոց Թագաւորաց. Առաջին և Երկրորդ գիրք Ժողովոդի. Առաջին գիրք Եզրասայ, Նեհեմանի, Եսթերի. Երկրորդ գիրք Եզրասայ, Յովբայի. գիրք Մակաբայեցւոց և Երրորդ գիրք Եզրասայ։

Գրչանուէրն։—Ռուսաց գրականութեան պատմութիւնը, վերջացնելով Գօգոլից յետոյ եղած Ռուսաց գրականութեամբը, Սպայէնկի ձեռնարկով. Չեռնոբիլնէ նոր գրականութեան վերաբերեալ.—«Ռուսաց հին և նոր գրա-

կանոնների պատմութեան» Ա. Գալախով։ «Պատմական Խրիստոմատիայ (ընտիր Հատուածք)» Գալախովինն և Բուսլայեվինը։

Պատմութիւն։—Միջին դարու պատմութիւնը վերջացնել Իլովայսկու ձեռնարկով։

Պատմութիւն Ռուսաց մինչև Պետրոս Մեծի ժամանակը, ձեռնարկ Բոժդեստվենսկու։

Հնդրուխիա։—Ցօմյէ ձեռնարկով՝ նորա մնացած միւս գլուխները։

Եկէլոպեդիա։—Բոլոր երկրաչափութիւնը, Բուսլայեվի ձեռնարկով։

Լատիներէն։—Թարգմանել կարողանալ Ցեզարից և Օվիդիանից, և կրթութիւն գրաբար։

Յունարէն։—Թարգմանել կարողանալ Հերոդոտի պատմութիւնից, և Հոմերոսի Ոդիսականից, հանդերձ Յոնիական բարբառի ձևերի գիտութեան և վեցչափեան գրուածոց կանոնների վերծանութեան։

Գրանսերէնից և Գերմաներէնից։—Հասկանալ քերականութիւնն և կարողանալ թարգմանել։ Դասագրքերը նոյնն են։

Չորրորդ դասարան

Նախորդ երեք դասարաններում՝ ուսանդեալներից զատ։—

Արձ.։—Ս. Գրքից իմանալ Հին կտակարանի Վարդապետական գրուածները։

Տրամաբանութիւն։—Ամբողջ տրամաբանութիւնը. Լինդնէրի դասագրքով (Թարգ. Սվէտլինի)։

Պատմութիւն.— Նոր Դարի Ընդհանուր պատմութիւն մինչև XVIII դարը։ Իլովայսկու դասագրքով. և Ռուսաց պատմութիւնը՝ Պետրոս Մեծից սկսած՝ մինչև XVIII դարը՝ ևից Արևմտեան Եւրոպայի իրողութեանց և սկիզբն XIX դարու Բոժդեստվենսկու ձեռնարկով։

Ներածութիւն.—Պարտաւորապէս ուսանել եռանկիւնաչափութիւնը ձեռնարկով.—Դիմիտրիէվ ուղղագիծ եռանկիւնաչափութեան սկզբնական կանոնները։ Պասկալեան օրէնք.—Ֆեաժոլովի և Սեմիլեօրովի ձեռնարկով։

Լատիներէն։—Թարգմանել կարողանալ Վերգիլիոսի Ենէականից, Հորացիայի երգիծաբանութեան ընտիր տեղերը, Սիկերոնի և Սենեկայ փիլիսոփայական ճառերը։

Յունարէն։—Թարգմանել կարողանալ Հոմերոսի Եղիականից և Դեմոսթենէսի ու Իսոկրատէսի ճառերից։

Գրանսերէն և Գերմաներէն։—Հիմնատուր գիտութիւն քերականութեան, և կարողանալ թարգմանել օտար լեզուից Ռուսերէն և հակադարձը։ Բացի սորանից՝ շարադրել Ս. Գրքից տրամաբանութիւնից և գրականութիւնից առաջարկած խնդիրներին համեմատ։

Հինգերորդ դասարան.

Բացի նախորդ չորս դասարաններում անցածներից.—Արձ.—Ուսանել մարգարէական գրքերի բովանդակութիւնը և Հին կտակարանի կանոնական գրքերի պատմութիւնը։

Հոգեբանություն.—Ամբողջ հոգեբանություն։ Իրրև ձեռնարկ կարող է օգտաւէտ լինել նախորվելի «Ընդհանուր Հոգեբանութեան»։

Յիշէտ.—Ամբողջ դասընթացը ֆիզիքայի. կրնվի ձեռնարկով։

Տիեզերագրություն.— Աստղաբաշխական աշխարհագրութեան սկզբնական կանոնները և ֆիզիքական աշխարհագրութեան համառօտ ծրագիրը՝ ըստ վօլֆնի։

Էսքինեզ.—Թարգմանել կարողանալ կիկերոնից, Ներեկսից, Լոկոանցից (de Fulsa religione) և Ս. Օգոստինոսի (de civi tate Dei)։

Յունարէն.—Թարգմանել կարողանալ Պղատոնից և Պլուտարքոսից (Սոկրատի ապօլօգիան Կրիտօն)։ Տեսութիւն էլլէնօֆօյական վարդապետութեան։ Բոլոր յայտնեն հարցաքննուողը պէտք շարադրութիւն գրէ՝ Ս. Գրքից, դրականութիւնից, տրամաբանութիւնից, հոգեբանութիւնից և փիլիսոփայական վարդապետութիւնից առաջարկած խնդիրներին համեմատ։

Հոգևոր ճեմարանք (Ակադեմիա)։

Գտնվում են հոգևոր ճեմարաններ.— Ս. Պետերբուրգում, Մոսկվայում, Կիևվում և Կազանում։

Ճեմարանում ընդունվում են ուղղափառ դաւանութեան ամենայն դասակարգի պատկանող ուսանողները, որք ցանկանում են մտնել ճեմարան, տալիս են իրենց յանուն վերատեսչի մինչև 15 ն Օգոստոսի, կցելով իրենց հետ ուղարկելով այն բոլոր վկայագրերն, որոնք պահանջվում են համալսարան մտնելու համար և։

Ուսանողներն ընդունվում են տարին մի անգամ՝ ուսման տարու սկզբին և միմեայն առաջին ընթացքում (курсъ) —վասնորոյ՝ Օգոստոսի երկրորդ կիսում բացվում է ճեմարանում գրաւոր և բանաւոր ստուգիչ հարցաքննութիւն դպրանոցական և գիմնազիոնական ուսանելեաց ընթացքից ամեն միանգամ ճեմարանի խորհրդի կարգադրութեանը համեմատ։ Ցառաջադէմ հարցաքննութիւն տուողներն ընդունվում են արքունի հաշուով, եթէ կամենան, աղատ տեղերին համեմատ։ Ընդունուած ուսանողներն անյապաղ ընտրում են իրանց համար ճեմարանական ուսման երեք բաժիններից մինը կամ միւսը։ Իրենց հաշուով կեցողներն ընդունվումեն ճեմարանի շինուածքում՝ որքան կներէ ճեմարանի ընդարձակութիւնը. նոքա կարողեն ընդունուել կամ լիակատար վճարով իբրև գիշերօթիկներ, կամ իբրև կիսաթոշակ ուսանողներ, որոնք չեն ստանում միայն հագուստը։ Լիաթոշակներն և կիսաթոշակներըը վճարում են ըստ քառամնեայի (третъ). և այն ևս յընթացս առաջին քառամնեայի ամսուայ՝ առաջին կիսում՝ այդ պահանջին բաւարարութիւն չտուղները նշանակեալ ժամանակի անցնելուցն զկնի, զրկվում են իրաւունքից օգտուել ճեմարանի մէջ բնակութիւն և ապրուստ ստանալուց։ Միևնոյն ժամանակ չվճարած ժամանակի հաշիւը պահանջվում է նոցանից։ Այն դէպքում՝ երբ լիաթոշակ կամ կիսաթոշակ ու-

ստանողները թողում են ճեմարանը քառամեայն չլրացած, նոցա վճարած դրամը չէ վերադարձնվում իրենց։

Արքունական հաշուով ուսանողները՝ ճեմարանական ընթացքն աւարտելուց զկին, պարտաւոր են ճեմարանում ծառայել իւրաքանչիւր տարուայ պահպանութեանը համար մի և կէս տարի հոգևոր ուսումնարանական իշխանութեան նկրքոյ,—ներգործական (дѣйствительный) ուսանողները հոգևոր դպրոցներում, իսկ կանդիտատներն և մագիստրոսները թեմական դպրոցներում կամ հոգևոր ճեմարաններում, ուր որ նոցա՝ իշխանութիւնը կնշանակէ, հակառակ դէպքում վերադարձնում են այն գումարը, որ գործ է դրուել նոցա պահպանութեան համար ճեմարանում, համեմատ այն ժամանակին, որ մնացել են ճեմարանում և կամ չծառայած ժամանակի նկատմամբ։ Ճեմարանի ուսանողներից, որք սովորել են արքունի հաշուով, բայց իրենցից անկախ պատճառաւ չեն ստացել պաշտօն հոգևոր իշխանութեան դպրանոցներում, մտնելով հոգևորական պաշտօնի մէջ, կարող են ճեմարանի ուսման վճարից ազատուել։ Ճեմարանի մի դասընթացից (курсъ) միւսն անցնելու ժամանակ ենթադրվում են հարցաքննութեան։

Ճեմարանական դասընթացն աւարտելուց յետոյ, ուսանողները ստանում են մրցանագիր. և ըստ այնմ կոչվում են.—дѣйствительный студентъ և кандитатъ (թերևս կարելի լինի հայերէն ասել լոկ աւարտող ուսանող և արտօնաւոր ուսանող)։ Անցնելով չորրորդ դասընթացը (курсъ) նոքա ընտրում են այդ դասընթացում լսելու համար այն առարկաներն իրենց բաժնի, որոնցից պէտք հարցաքննուին յաստիճան մագիստրոսութեան և լինել ուսուցիչ թեմական դպրանոցներում։

Չորրորդ դասընթացն աւարտողներից ոմանք հարցաքննվում են այդ դասընթացի գիտութիւններից մագիստրոսի աստիճան ստանալու։ Այդ հարցաքննութիւն տուողներն՝ եթէ միևնոյն ժամանակ ներկայացնում են մի ուսումնական ճառ և պաշտպանում հրապարակաւ իրենց գրածը, ստանում են մագիստրոսի աստիճան։ Իսկ նոքա՝ որք հարցաքննութիւն են տուել բայց ուսումնական ճառի վերաբերմամբ գոհացուցիչ չեն, ստանում են միայն մրցանագիր ուսումնական աստիճանի և կոչվում են կանդիդատ, որք ունին իրաւունք դասախօսելու թեմական դպրանոցներում։

Սարգիս Քահանայ Բէգ-Նազարեանց։

ԱՐԱՔՍԻ ՀՈՎԻՏԸ ԵՒ ՀԱՑԵՐ

(Nouvelle Géographie universelle par Elisée Reclus. (T. VI l'Asie Russe. P. 260—271)

—o—

«Արմենիէնները» կամ լաւագոյն Հայ, Հայք կամ Հայկեանները, ինչպէս իրանք իրանց անուանում են, Արաքսի հովտում բնակւող դլխաւոր ազգն են։ Իրանց թիւով ամբողջ Կովկասի մէջ չորրորդ, իսկ ազդեցութեամբ, ուսեաներից յետոյ առաջին տեղն են բռնում։ Արմենիայ կոչումը արամական ծագում ունի և հաւանականաբար նշանակում «բարձր երկիր» և շատ անորոշ մի անուն է, որ տրւում էր այն բոլոր սարահարթերի խմբին, որոնց կենդրոնում տիրապէս բարձրանում է Արարատի երկձիղ գագաթը։ Բուն Արմենիան կամ Հայաստանը, որ նշանակում է Հայերի բնակութեան երկիր, ենթարկուելով քաղաքական դժբաղդ փոփոխութեանց և գաղթականութեանց, դարուց դար փոփոխեց նաև իր սահմանները։ Արդի ժամանակում Հայաստան կարելի է համարել Արաքսի գրեթէ ամբողջ հովիտը, Կուրի աւազանի մի նշանաւոր մասը, գետի աջ և ձախ ափերով, Եփրատի ամբողջ վերին աւազանը մինչև նորա երկու ճիւղերի խառնորդը, Վանայ լճի ափերը և Ուրմիա լճի աւազանում՝ պարսկաստանի մի քանի կողմնները։ Հայաստանի ծանրութեան կենդրոնը հետզհետէ տեղափոխուել է դէպի հիւսիս, երբեմն այդ կենդրոնը գտնւում էր Վանայ լճի մօտերքում և վերին Մուրատի կամ Արևելեան Եփրատի հովտում, ուր մինչև այժմ էլ մի գիւղ կրում է այդ Հայ ազգի անունը։ Իսլ մուսուլման թուրքերին ենթարկուած երկիրը չէր կարող Հայերի սուրբ երկիր համարուել, ուստի և աշխարհի ամեն մասերից, ուր ցրուած են Հայերը, նոցա հայեացքը դառնում է դէպի Արարատ սարը և Արաքսի դաշտերը, ինչպէս դէպի իրանց բուն հայրենիքը։ Մեր օրերում էլ հէնց այդ տեղում է նոցա ցեղի ժողովման կենդրոնատեղին, և ոչ մի տեղ այդպէս անխառն օտար ազգերից և խառնութեամբ չեն ապրում Հայերը ինչպէս այդ երկրում, ուր և լեզուն, ինչպէս ասում են, ամենամաքուրն է և եկեղեցում գործածուած Հայերէնի մերձաւորը։ Վերջինը 14-դ դարի վերջից անհետացել է բոլորովին գործածութիւնից։

1828—1830 թուականին, երբոր ռուսները տիրեցին երկրին, Պարսկաստանից և Թուրքիայից մօտ 130000 Հայ գաղթեցին ռուս զօրքի պաշտպանութեամբ և հաստատուեցան Արաքսի և Կուրի հովիտներում, բռնելով քուրդերի և թաթարների տեղը, որոնք հակադարձաբար գաղթեցին մահմետականների ձեռքում մնացած գաւառները։ Վերջին 1877-78 պատերազմի ժամանակ երկուստեք հակադարձ գաղթման յար և նման երևոյթը կրկնուեցաւ։ Արտահանի գաւառը, Կուրի վերին հովտում և Կարսինը, Արաքսի աւազանում, մեծաւ մասամբ զրկուեցան իրանց մահմետական բնա-

կիչներից և ի տրիտուր ստացան բազմաթիւ հայեր, որոնք գալիս էին Եփրատի վերին աւազանից և Ճորոխի ափերից, մանաւանդ այն մասերից, որ Սան Ստեֆանոյի դաշնագիրը տուել էր Ռուսներին և Բեռլինի վեհաժողովը նորից յետ առել. Այս ազգերի եկէղ հանդիպումը չէր առանց կոտորածի, սովի և տարափոխիկ հիւանդութեանց. Սարսափելի բազմութեամբ մարդկային կեանք զոհ գնաց, և այժմ էլ դեռ չնայելով խաղաղութեան հաստատուելուն, ցեղական և կրօնական ատելութիւնը պատճառ է դառնում արիւնահեղ տեսարանների. Այսու ամենայնիւ, ընդհանրապէս առած, ժողովուրդը աւելի լաւ տեղաւորուեցաւ, համեմատ իրենց բնական ձգտման.

Մինչև այժմ չկայ քիչ թէ շատ ճիշտ վիճակագրութիւն Փոքր-Ասիայում և ընդհանրապէս մահմետական հողի վերայ ապրող հայերի թուի վերաբերութեամբ, բայց հաւանական է որ այս կողմում ապրողները ռուս հողի վերայ ապրողներից սակաւաթիւ են 1).

Ամբողջ ազգը, սովորաբար 3 և մի քանի հեղինակներից 2) մինչև 4 միլիոն համարուած, հաւանական է որ 2 միլիոնից աւել չէ.

Մի բացառիկ տարօրինակութեամբ, որ հայերի ցրուածութիւնն է ցոյց տալիս, հայերով ամենաբազմամարդ քաղաքը ոչ միայն Հայաստանից այլ և Ասիայից դուրն է գտնուում, այն է Կոստանդնուպոլիսը, ուր Հայոց «ազգը» 200000 պակաս չպէտք է լինի. Թիֆլիս, երկրորդ հայկական քաղաքը իւր բնակիչների բազմութեամբ, Վրաստանի մասն է և ոչ—հայկական հողի վերայ է շինուած. Նոյնպէս և Անդրկովկասի բազմաթիւ քաղաքները, որոնց բնակիչների մեծագոյն մասը հայեր են. Առանց ազգային միութեան և առանց ազգային անկախութեան, դարերից հետէ հայերը տարածուած են բոլոր արևելեան աշխարհում, սկսած Հերոդոտոսի ժամանակից, որ նոցա տեսել էր Բաբիլոնում.

Երբ որ նոցա երկիրը աւար դարձաւ աշխարհակալներին, լաւ համարեցին հայերը «օտար լինել օտար երկրում, քան տրուկ սեպհական հայրենիքում.» Եւ գաղթեցին բազմութեամբ. 11-դ դարից սկսած մինան նոքա Ռուսաստան, Լեհաստան, Բուքովին, Գալիցիա, Ներկայումս նոցա կհանդիպես բոլոր շահաստան քաղաքներում Լոնդոնից մինչև Սինգապուր և Շանխայ, ուր և նոցանից շատերը նշանաւոր վաճառականներ են. Շատ անգամ

---

(1) Հայերի հաւանական թիւը.

Կովկաս և Եւրոպական Ռուսաստան . . .	840,000
Թուրքական Հայաստան, ըստ Պալէնստայնի . .	760,000
Պարսկական « « Դիւլորիէի . .	150,000
Եւրոպական Թուրքիա	250,000
Ուրիշ երկիրներ	60,000
Գումար	2,060,000

(2) Issaverdens, Armenia and the Armenians.

հայերին համեմատել են հրեաների հետ, որ նոցա նման ցրուած են աշխարհի երեսին, և այս համեմատութիւնը շատ կէտերում ուղիղ է։ Հայկեանները Իսրայէլեաններից յետ չեն մնում ոչ կրօնական տոկունութեամբ, ոչ խմբական համերաշխ ոգւով, ոչ շահագէտ բնազդմամբ և ոչ վաճառական ճարպիկութեամբ. բայց հրեաների չափ բաղդախնդիր չեն։ Մինչդեռ աշխարհի ծայրումն էլ կը հանդիպես մենմենակ հրէային, որ առանց թուլանալու կեանքի պատերազմն է մղում. հայն ընդհակառակը գաղթում է խմբովին և ամրապինդ հատարակութեամբ։ Բայց յայսմանէ հայերի մեծամասնութիւնը մնացել են իրանց ծննդավայրում. և հրէաների նման չեն զբաղում հողագործութիւնով։ Արդրկովկասի շատ գաւառներում գիւղացիք ամբողջովին հայեր են։ Միւս կողմից, ինչպես Ղարաբաղի մի քանի գիւղերում, բնակիչները գաղթում են ժամանակաւորապէս միայն, բանելով իբրև քարտաշ կամ ատաղձագործ 1)։ Մինչդեռ աշխարհի և ոչ մի անկիւնում կգտնէք հրէայ, որ իւր ապրուստը այս ձևով ճարէր։

Սակայն հաւանական է որ սեմական տարրը մեծ բաժին ունի հայ ժողովրդի կազմակերպութեան մէջ, որովհետև հրէական բազմաթիւ գաղթականութիւններ, մինչ իսկ, խմբովին տեղափոխութիւններ կատարուել են Պաղեստինից դէպի Հայաստան 2)։ Ընդհանրապէս առած «Հայկայ սերունդը» Արիաներ են, շատ մերձաւոր Պարսիկներին, բայց յընթացս չորս հազար տարուայ պատերազմ, աշխարհակալութիւն, աքսոր անդադար յեղափոխել և Արիաներին խառնել են դրացի ազգերի հետ։ Հրէաները, մանաւանդ, ստիպուեցան խմբովին տեղափոխուիլ Հայկական լեռները, ինչպես Ասորի աշխարհակալների գերիներ։ Օրինակ Բագրատունի ցեղը, Հայաստանում և Վրաստանում թագաւորող ամենահամբաւաւոր հարստութիւնը, իւր ծագումն յառաջ է բերում հրէաներից և ծննդաբանութիւնն հասցնում է մինչև Դաւիթ, Մարգարէ—թագաւորը։ Հայաստանի զանազան եկամտաբերից յայտնի է նաև Մամիկոնեան ցեղը, իբրև ազգի վերայ ահագին ազդեցութիւն ունեցող, որ ձևնաց, այն է Հինաստանի մի իշխան բերեց Սոմխէթ և Հայաստան Փրկչի Թուականութեան 3-դ դարում։ Ժամանակագրաց պատմութիւնները պարզ կերպով ապացուցանում են որ այս ծագրականների մեծագոյն մասը, Նորմանդների և Վառէգների նման, պատերազմողներ 3) էին և վարձում էին կռուելու անխտիր թշնամու կամ բարեկամի համար և նոյնպէս իրանցի (Արիա) էին և հաւանականաբար պատկանող այն ճիւղին, որից են Օքսուս գետի աւազանի Տաճիկները 4)։

Բոլոր քերականները հայոց լեզուն դասում են արիական ընտանիքում։ Այդ լեզուի մեծագոյն նմանութիւնը զենդի հետ է, քերականական կազ-

(1) N. von Seidlitz, Mittheilungen von Peterman. 1880—Notes manuscrites.
(2) Carl Ritter, Asien. vol. X.
(3) Saint—Martin, Mémoire sur l'Arménie.
(4) Schweiger—Lerchenfeld, Armenien;—Fr. von Hellwald: Central—Asien.

մութեամբ ամբողջովին իրանական է, իսկ բառերով շատ նման է յոյն և սլաւոն լեզուներին։ Թէև շատ կոշտ և բաղաձայներով լեցուն, հայ լեզուն բառերի և քերականական ձևերի հարստութեամբ հաւասար է յունականին, ունենալով կազմութեան նոյն ճկունութիւնը և բարդ բառեր ստեղծելու անսահման կարողութիւն։ Ճշմարիտ է թէև որ նոր հայերէնը, բաժանուած բազմաթիւ բարբառների, շատ բառեր — բացատութիւններ առել է թուրք և վրացի լեզուներից, մանաւանդ Արաքսի ստորին հովտում, ուր հայերը շրջապատուած են թաթարներով, խօսում են մի պլանդակ գաւառաբարբառ, ուր երբեմն թուրքերէնը աւելի շատ է քան հայերէնը, իսկ Ճիրուանում, կովկասեան շղթայից հարաւ, շատ հայ գիւղեր մոռացել են հայերէնը։ Այս տեսակ փոփոխութիւնները անխուսափելի էին ցեղի ցրուածութեան պատճառաւ։ Բազմաթիւ հայեր շատունց հեռացած լինելով մայր հայրենիքից, ինչպէս Բուքովին և Տրանսիլուանիայի հայերը, մոռացել են իրենց նախնեաց լեզուն։ Էջմիածնի նուիրական վանքում, ուր խօսւում է դասական հայերէնի ամենամերձ բարբառով, հայ լեզուն է մինչև այժմ էլ զուտ իրանական բարբառ, միւս կողմից՝ հայ գրականութիւնը երկու հազար տարուց աւելի է որ օրից օր հարստանում է անընդհատ և ցոյց է տալիս լեզուի պատմութիւնը և նորա ծագումը։ Վանի երկրում ժայռերը ծածկուած են հայկական արձանագրութեամբ բևեռաձև գրերով։ Հայկական ուրիշ յիշատակարաններ գրուած են յոյն և պարսիկ գրերով և սկսած փրկչական 4-դ դարից, որ գրականութեան ամենածաղկեալ միջոցն է և երբ 300 գպրոց բացուած էր պատանիների համար, հայերէնը սեփական այբուբեն ունեցաւ, որ մինչև օրս էլ գործածութեան մէջ է։ 14-դ դարում Լանքթամուրի արշաւանքը յանկարծակի վերջ դրաւ Հայաստանի դասական գրականութեան։ Ներկայումս հայերը, մեծապէս նախանձախնդիր իրենց ընտանեաց, ջանք են գործ դնում իրենց որդւոցը ուսման առաւելութիւնները մատակարարելու և չկայ հասարակութիւն որ գպրոց չունենայ կամ չպահէ...։ Գիտական և գրական շարժումը շատ զօրեղացել է և հայերը, համեմատած իրենց թուին, ամբողջ ռուս կայսերութեան մէջ առաջին ազգն են գիրք տպելում։ Առաջ հայ գրականութիւնը բաղկացած էր աստուածաբանական, պատմական, բնաղանցական և քերականական գրքերից, իսկ այժմ նա սկսել է ձեռք գցնել բոլոր ճիւղերին և հարստանում է օտար նշանաւոր գրքերի թարգմանութեամբ։ Պատմում են ճանապարհորդները որ Անատոլիայի խորքերում անգամ հանդիպում ես ֆրանսագէտ հայերի որ ծանօթ են մեր գրականութեան։ 1854 թուին դեռ, Եւրոպայում և Ասիայում, գոյութիւն ունէր առ նուազն 22 հայ տպարան։ Հայ լրագիրներ են հրատարակւում Թիֆլիզում, Կոստանդնուպոլսում և ուրիշ քաղաքներում 1), պլ և պլ միաբանութիւններ՝ Մոսկուայում, Վիէննա-

(1) Հայ լրագիրներ 1880-ին։ Կոստանդ. 9։ Թիֆլիս 5։ Էջմիածին 1։ Մոսկ. 1։ Վիէննա. 1։

յում՝ Պարիզում՝ Վենետկում զբաղուած են հին լեզուի երկերի հրատարակութեամբ։ Հայերի օտար երկրներում ունեցած հաստատութիւններից նշանաւորագոյնն է Մխիթար՝ որ է «սփոփիչ» արեղայի՝ 1717 թ. Ղազարի կղզում հիմնարկած վանքը՝ Վենետկի և Լիդոյի միջև գոնդոլների անցած ջրանցքի մօտ։ Այս կարմիր կղմինդրով շինուած և պարտէզներով շրջապատուած վանքում հրատարակւում են թանկագին յիշատակարաններ և գանւում է մի մատենադարան արևելեան հազուագիւտ ձեռագրերի։

Վենետկի Մխիթարեանները՝ ինչպէս և Անդրկովկասից և Թուրքիայից դուրս ապրող հայերի մեծ մասը՝—Դաւեղ Հայեր (պապական են)՝ կաթոլիկ եկեղեցու դաւանութեան՝ միանգամայն պահած իրենց աւանդական ծէսերը։ Բայց հայ ազգի ամենամեծ մասը՝ Եփրատի և Արաքսի հովիտներում՝ հաւատարիմ է մնացել նախնական քրիստոնէական կրօնին. իսկ այն հովիտներում ուր երկու դաւանութեան պատկանողները միասին են ապրում՝ թշնամաբար են վարւում և կարելի եղածին չափ խոչ են տալիս մինչև անգամ վաճառականական յարաբերութեանց մէջ մտնել։ Բուն հայկական և կաթոլիկ եկեղեցւոյ մէջ եղած տարբերութիւնը՝ Ծիսաւս—Քրիստոսի բնութեան, դժոխքի և քաւարանի, ժողովների հեղինակութեան, եկեղեցական դասակարգութեան և զանազան ծիսակատարութեանց վրայօք է, բայց թէ այս և թէ այն դաւանութեանց մէջ էլ կան շատ՝ հին կրօններից մնացած սովորութիւնք։ Հայաստանի ժողովուրդը առաջինն է բոլոր ազգերից՝ որ խմբովին քրիստոնէութիւնն ընդունեց Դ. դարի սկզբում Գրիգոր «Լուսաւորչի» ձեռամբ՝ բայց աստուածները փոխելով՝ նա չկորցրեց իւր աւանդութիւնները և հետ չգնաց միայն փոխեց իւր դաւանութիւնը—դարձը կատարուեցաւ աստիճանաբար։ Դեռ այժմ էլ՝ ինչպէս և Զրադաշտի (Զորոաստր) ժամանակ տօնում են աստուածային կրակը։ Ամանորի տօնին նորապսակների մի ղոյգ պղնձէ ամանի մէջ պրում են բարերար երկրի տուած լաւագոյն պտուղները՝ մրգ՝ քիստով հասկեր՝ դափնու ճիւղեր՝ խաղողի ողկոյզներ։ Կեանքի բոլոր նշանաւոր դիպուածներում նայում են արեգակին՝ կարծես նորանից զօրութիւն խնդրելով։ Նշանածները դէմքերը դարձնում են դէպի նա՝ նորան վկայ բռնելով իրանց սիրուն՝ հիւանդները նորանից առողջութիւն են խնդրում՝ մեռնողները իրանց վերջին շունչը նորան աւանդում և մեռեալներին թաղում են դէռ նորա ճառագայթները չանհետացած 1)։ Մեծ տօներին հայերը ցուլ և խոյ 2) են բերում եկեղեցի կամ նուիրական ծառերին՝ պսակում ծաղիկներով և վառած մոմերով զարդարում՝ յետոյ և մորթում են այդ կենդանիներին՝

(1) Cirbied, Mémoire de la Société des antiquaires de France, tome II 1820,—Bodenstedt, Die Völker des Kaukasus;—Moritz Wagner, Reise nach dem Ararat.

(2) N. von Seidlitz, Mittheilungen von Peterman, 1880;—Notes manuscrites.

երգելով և աղօթելով։ Այս ակներև Միթրայ աստուածոյ զոհն է, որ հին կրօնքը ժառանգութիւն է թողել նորին։

Հայոց հոգևոր գլուխը «Կաթուղիկոսն» է, որի իշխանութիւնը կապուած է մի թանկագին մասունքի հետ, այն է նահատակ Գրիգորի աջը։ Կաթուղիկոսն ընտրուում է Էջմիածնի պաշտօնեաներից, եթէ որ իւր նախորդը կանխապէս մէկին չէ նշանակել։ Կաթուղիկոսին հնազանդում են բոլոր Գրիգորեան (լուսաւորչական) դաւանութեան հայերը։ Կաթուղիկոսն է կարգում առաջնորդ եպիսկոպոս, որ գրեթէ միշտ կուսակրօններից է լինում, իշխում Պոլսի և Երուսաղէմի պատրիարքներին։ Հէնց այս է պատճառը որ ռուս կառավարութիւնը շատ մեծ նշանակութիւն է տալիս Արարատ սրբազան սարի և Էջմիածնի նուիրական վանքի տիրապետութեանը։ Աչքարհիս այս կտորին տիրելով, որ այնչափ հռչակաւոր է բոլոր արևելքում, ռուս վարչութիւնը ապահով է 2 միլիոն ժողովրդեան հոգևոր Տիրոջ հաւատարմութեանը։ . . . . Ծայտնի է արդէն թէ որքան մեծ բաժին են ունեցել հայերը Կոստանդնուպոլսում, իրենց Օսմանլի տէրերի անուան տակ, կառավարութեան գործերում։ Պետերբուրգում նոյնպէս սկսել են իրենց դերը խաղալ, ինչպէս երբեմն խորամանկ Իտալացիները Ֆրանսայում։ Անդրկովկասում էլ, կամաց կամաց տիրանում են հողին. իբրև կալուածատեր, մշտապէս՝ դրացի թուրքերինը խլում են։

Ֆիզիքական տեսակէտից նկատուած, Անդրկովկասի հայերը շատ սակաւ են տարբերւում վրացիներից։ Հայի գեղագրութիւնն աւելի խոշոր է, դէմքը աւելի կլոր, վիզը կարճ և աւելի հաստ, շատերը պարարտանում են (հաստափոր), թերևս նստակեաց կեանքի պատճառաւ։ Խիտ և սև մազերը ծածկում են գլուխը, կանանցը գրեթէ միշտ զարդարուած է լինում ծաղիկներով։ Հայերը մեծ մասամբ ունին սև, խոշոր և տարփալի (langoureux) աչքեր, երևումն են միշտ քաղցրաբարոյ գրեթէ մելամաղձոտ։ Ի բնէ թէև շատ հանգարտ, բայց քաջութեամբ յետ են մղում իրենց վրայ յարձակուողներին, ինչպէս նոքա այդ ապացուցեցին 18րդ դարի սկզբում եօթնամեայ պատերազմի ժամանակ, անկախութեան համար, որ մղեցին նոքա ընդդէմ պարսիկների՝ Ղարաբաղի լեռներում և այնուհետև բազմաթիւ տեղական ապստամբութեանց ժամանակ ընդդէմ թուրքերի։ Սովորական կեանքում ոչ մի հայ զինուած չէ. մինչդեռ վրացու զգեստը, մանաւանդ Ռիոնի աւազանում, ուրից գլուխ ատրճանակների և դաշոյնների մի ամբողջ զինարան է։ Այստեղ հէնց ակներև յայտնւում է երկու ազգերի հակադարձ բնաւորութիւնը։ Եւ զարմանալին այն է, որ անզէնը, լծին հնազանդը, խաղաղասէրը, այն է Հայը, աւելի լաւ է կարողացել պահպանել իւր ազատութիւնը։ Նա չունի աղնուականներ, ազատաբար ընտրում իւր գլխաւորներին և ամեն ժամանակ կարողացել է զերծ մնալ անտանելի ճորտութիւնից։ (Հողային ստրկութիւն) որ ընդհակառակն եղել է և այսօր էլ, ուրիշ անուան տակ, է վրացիների մեծագոյն մասի մասն և բաժինը։ Արաքսի հայերը, ընդհանրապէս շատ տգէտ թէև, բայց ունին բնական

մեծ ընդունակութիւն և երբ ուսանելու յարմար դէպքի են հանդիպում, սովորում են զարմանալի արագութեամբ. Նոքա Սլաւներին անգամ գերազանցում են իրենց օտար լեզուներ սովորելու հրաշալի դիւրութեամբ. «Հայը խելքը գլխումն ունի, իսկ վրացին աչքերում», Գրականութեան նայելով, հայերը՝ ուրիշ ազգերի մէջ հաղուագիւտ պակասութիւնն ունին, այն է՝ չափազանց ծանրաբարոյ են և ընդունում են ամեն բան չափազանց լրջօրէն. Ոտանաւորի ներդաշնակութիւնը նոցա վերայ քիչ է ազդում 1), թէև ունեցել են լաւ բանաստեղծներ և այժմն էլ, մեր օրերում, արժանաւոր գրողներ երգել են բնութիւնը և հայրենիքը. Սիրում են մասնաւորապէս ճառել աստուածաբանութեան, բնազանցութեան և քերականութեան վրայ, և գիտական երկասիրութիւններով նշանաւոր են եղել գրական պատմութեան մէջ. Ոչն հայրերի մի քանի գրուածքները, որ կարծում էին անդառնալի կորած, ինչպէս Եւսեբիոսի, Փիլոնի, Ակեբերանի գրուածքներից կտորներ, գտնուեցան հայկական հին թարգմանութեանց մէջ, Վենետկի և Վիէննայի Մխիթարեանց ձեռքով 2).

Գրեթէ բոլոր երկրներում, ուր ապրումն հայերը, իրենց մեծ հոգածութեամբ հետեւ են պահում ուրիշ ցեղի և լեզուի մարդկանցից. Այս էլ կայ, որ վաճառականութեան շնորհիւ առանձին դասակարգ են կազմում. Վրացի և Թուրք գիւղերում ու քաղաքներում նոքա նոյնչափ հարկաւոր են, որչափ և ատուած ու արհամարհուած, ինչպէս հրէաները արևելեան Եւրոպայում. Այսուամենայնիւ, առանց մեծ չափազանցութեան կարելի է հայ գիւղացուն վերագրել Տուրնըֆորի (Tournefort) ասածը. «Հայերը աշխարհի ամենալաւ և ամենազնիւ ժողովուրդն են», կամ Բպյրոնի ասածը թէ՝ «Հայերի առաքինութիւնը իրենցն է, իսկ մելութիւնը ուրիշներից առած». Այլազգների ընկերակցութիւնից դուրս ապրող հային շատ պէտքն է թէ ինչ կարծիքի են իւր մասին. Հին սովորութեանց հետեւող հայը, լինի երկրագործ թէ վաճառական, բոլորովին առանձնացած է իւր ընտանիքի մէջ. Նահապետական սովորութիւնները դեռ գործ են դրուում. Պապը հրամայում է, որդիք, թոռներ, թոռները լսում են. Կին արմատը դատապարտուած է լռելու, գոնէ մինչև իւր առաջին ծննդաբերութիւնը, պարանոցը և դէմքի ստորին մասը կապում է հատ ծածկոցով, որով փակում է բերանը, ինչպէս համր ստիպուած է նշաններով խօսել. Երբ որ մայր դարձաւ իրաւունք է ստանում տան մէջ եղած կանանց հետ ցած ձայնով խօսելու, իսկ աղատութեամբ խօսելու համար պիտի սպասէ հասուն հասակին կամ ծերանալուն. Ցան բոլոր հոգսերը նորա վերայ են ընկած մինչև մի նոր ներ, (տեգերակին) հարս գալը 3). Հազիւ է

(1) Bodenstedt, Die Völker des Kaukasus.
(2) Dulaurier, Revue des Deux Mondes, 15 avril 1854.
(3) James Greag. Armenians, Koord and Turks.

պատահում որ օտարականը հրաւիրուի հայի տուն։ Կարելի է հազար գիւղ անցնել առանց կասկածելու անգամ թէ այդ տեղ մարդիկ են բնակւում։ Տներն ու պարտէզները շրջապատուած են բարձր պատով և աչքից պահուած։ Շատ տխուր և տգեղ են, մանաւանդ կանաչից զուրկ դաշտերում այդ կաւից շինած բարձր պատերի երկար պողոտաները, որոնց գիւղ անունն են տալիս։

Արաքսի ստորին ափերում բնակուող թաթարները, ոչ լեզուով, ոչ կրօնքով և ոչ էլ սովորութեամբ տարբերուում են Կուրի հովտում բնակուող Թուրք ցեղերից։ Բոշաներ էլ կան հայկական երկրում, իսկ ինչ վերաբերում է քուրդ հովիւներին, որոնք թափառումեն Արարատի պառեզներում, Արագածի կողերի և Գեօքչայի (Սևան) ափերի վրայ, դրա գրեթէ բոլորն էլ ժամանակաւոր գաղթականներ են եկած Քուրդիստանից, Պարսկաստանից և Թուրքիայից։ Այս հովիւների մէջ կան և հարիւրաւոր Եզիդներ, որոնք ինչպէս ստանդարտի երկրպագուներ, սարսափով են նկատում դրացիներից։ Հայկական Անդրկովկասում, միայն Զանգազուրի գաւառի մէջ, Գեօք-չայից հարաւ-արևելք, գտնւում են հաստատաբնակ քրդեր, Բայց այս գաւառի 12—13 հազար քուրդն էլ հազնւում են թաթարի նման, հետզհետէ խօսում են նոցա լեզուն և նոցա հետ ձուլուելու վրայ են 1)։

(Թաքէր. ֆրանս).

Մ՛իաբան.

Նկատողութիւն.—Թարգմանելով Էլիզէ Րէկլիւի ընդհանուր աշխարհագրութեան VI հատորից այս փոքրիկ հատուածը իրրև նմուշ, աւելորդ չեմ համարում մի քանի նկատողութիւն. յուսալով միանգամայն, որ այդ ականաւոր աշխարհագրի երկասիրութեան, գոնէ միայն Կովկասի վերաբերեալ մասը, տեսնել շուտով հայերէնի վերածուած։

Ա. Օտար ճանապարհորդները, սկսեալ Քսենոֆոնից մինչև մեր օրերը, բազմաթիւ տեղեկութեանց հետ տուել են մեզ նաև շատ թիւր և սխալ փաստեր. ուստի և ամէն բան, ինչ որ գրուած է օտարից, պէտք չէ ընդունել հաւատ իւղի տեղ. Օրինակ՝ Էլիզէն հայոց թիւը 2 միլիոնից աւելի չէ կարծում և համարում է թէ Թուրքիայում աւելի սակաւաթիւ են հայերը քան թէ Ռուսաստանում, որ ամբողջապէս հակասում է մեր ունեցած աւելի ճիշդ տեղեկութեանց։

Բ. Հայոց լեզուն համարում է կոշտ և քաղցրայնչիւով լեզուն 2), Եւ յիրաւի, եթէ լատինական այբուբենով գրենք մեր բառերը, ստանում ենք բաղաձայնների կուտակութիւն, մեր մի ձայնն ստանալու համար (օր. ճ, ձ, չ, և այլն.) հարկաւոր է լինում նոցա 2—3 բաղաձայնը։ Մեր նուրբ և փափուկ բին, դառնում է կոշտ ռ-ա, (Օր. սէր, մեր, հայր, մայր և այլն.

(1) N. von Seidlitz, Mittheilungen von Peterman, 1880;—Notes Manuscrites.

(2) Ըստ Դելլորթէի։

բառերում)։ Եւ որ գլխաւորն է՝ մեր ը ձայնաւորը մոռացուամէ միջոց։ Առնենք օրինակ Մկրտիչ բառը, և գրենք լատին բառերով—Mkrtitch առանց նշանակելու ը տառը, ինչպէս դժբաղդաբար անում են շատերը, և կունենանք մի բառում եօթը բաղաձայն և մի ձայնաւոր միայն։ Մինչդեռ էջմիածին Մկրտիչ բառում կայ 3 ձայնաւոր, մի փակուկ րէ և միայն չորս բաղաձայն։ Հայ մանկավարժներին լաւ ծանօթ է, որ մեր մանուկները օտար լեզու սովորելիս շատ դժուարանում են մինչև անգամ երկու բաղաձայն միասին կապել առանց ը-ի։ Ռուսաց столъ, сказалъ բառերը արտասանում են ըստոլ, ըսկազալ — փոխանակ հնչելու стол, сказал։

Գ. Գալով հողային սարկուէթեան կամ ճորտուէթեան, որ մեզանում չէ եղել և որի պատճառաւ թէ Ռէկլիւն և թէ ուրիշ Եւրոպացիներ մեզ գովեստներ են շռայլում, պէտք է ասել, որ յիրաւի, մինչդեռ բոլոր Եւրոպայում և ամբողջ Քրիստոնեայ աշխարհում, գրեթէ մինչև մեր օրերը, գոյութիւն ունէր այդ հակամարդկային և հակաքրիստոնէական գրուէթիւնը, Հայաստանում երբէք մնատ չգոյնց նա։ Եւ արդար լինելու համար, պէտք է աւելացնել, որ ոչ ի շնորհս մեր քաջուէթեան, այլ շնորհիւ մահմետական տիրապետուէթեան։ Մահմետական երկրներում երբէք չէ եղել հողային սարկուէթիւն, այն մտքով, ինչպէս այդ կար Վրաստանում, Ռուսաստանում և այլն։

Դ. Զանց ենք առնում ուրիշ մանր մունր սխալներն ու հնացած տեսակէտները ուղղել, ինչպէս օր. կաթուղիկոսական ընտրութեան, կանանց լուսացուէթեան վերաբերեալ և այլն, որ իւրաքանչիւր ընթերցող կարող է ինքնին նկատել։

Թարգմանիչը։

ԱԶԳԱՅԻՆ

ՎԵՐԱԴԱՐՁ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ։

Վեհափառ Հայրապետն ազգիս բարեհաճեց ամսոյս 15-ին Բիւրակ անի Հայրապետական ամարանոցիդ վերադառնալ ի Մայր Աթոռս։ Նորին Վեհափառութիւնը ցանկանալով այցելել Օշականի գիւղին և տեսնել Ս. Մեսրոպի նորակառոյց եկեղեցին և դամբարանը, առաւօտեան ժամը 9-ին Բիւրականից դուրս եկաւ և Ղրղ թամիր հայաբնակ գիւղից անցնելիս աղ և հաց ընդունելով և օրհնելով ժողովրդին՝ 11-ին ժամանեց Օշական։ Նորին Ծութիւնը այցելեց եկեղեցին աղօթելով Ս. Մեսրոպայ

դամբարանի վերայ, օրհնեց ժողովրդին և գնաց տեղւոյն գ այրուցը, որ յարդարուած էր Նորին Վեհափառութեան համար։ Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել Օշականի հասարակութեան պատրաստած ճաշը։ Նորին Ծնութիւնը գոհ եղաւ տեսնելով նորաշէն վայելուչ եկեղեցին, ժողովրդի ջերմեռանդութիւն և նոր պատրաստած հանդապարհը, որով կամրջից դիւրութեամբ կարելի էր բարձրանալ Խրամը։ Ժամը 4 ին ճաշից յետոյ օրհնելով ժողովրդին ուղևորեց դէպի Էջմիածին, ուր և ժամանեց երեկոյեան ժամերգութիւնից յետոյ ժամը 6 ին։ Մայր Աթոռոյս Միաբանութիւնը և ձեմարանի աշակերտք իրանց ուսուցիչներով դիմաւորեցին Նորին Վեհափառութիւնը վանքի պարսպից դուրս հրապարակի վերայ։ և Նորին Վեհափառութիւնը նախընթացութեամբ միաբանական ուխտի շրջապատուած խուռնբն բազմութեամբ մտաւ եկեղեցի, աղօթեց Ս։ Իջմանն տեղի առաջ, օրհնեց ժողովրդեան և գնաց Վեհարան։

Հետևեալ առաւօտը, յառաւօտեան ժամերգութիւնից յետոյ ի ձայն յատկացեալ զանգակաց Մայր Աթոռոյս Միաբանական Ուխտը, ձեմարանականք և Վաղարշապատի առաջնորդը խըմբուեցին և կարգ ըստ կարգէ ներկայացան Վեհափառ Հայրապետին բարի գալուստ մնդրելու։ Վեհափառ Հայրապետը ընդունելով Միաբանական Ուխտին, գոհութիւն յայտնեց որ իւր բացակայութեան ժամանակ ամեն բան կարգին է անցել և ում ինչ գործ յանձնել է՝ սրբութեամբ է կատարուել։ Վեհափառ Հայրը յորդորեց բոլորին ըստ կարգի և աստիճանի և ըստ կարողութեան ծառայել ազգին և եկեղեցուն, նպատակ դնելով եկեղեցու պայծառութիւնը և ազգի օգուտը և ջանալով պարտաւճար լինել Աստուծոյ, իշխանութեան և ազգի առաջ։

ՏԱՐԵԴԱՐՁ ԲԱՅՄԱՆ ՁԵՄԱՐԱՆԻ.

Ամսոյս 26 ին, Սուրբ Գէորգայ տօնի օրը, լինելով նաև Մայր Աթոռոյս ձեմարանի բացման 13 րդ տարեդարձը, հանդիսաւոր սուրբ պատարագ մատուցուեց։ պատարագիչն էր Գեր։ Տ. Մատթիաս Եպիսկոպոս Օրմանեանց։ Սուրբ պատարագից յետոյ պատարագիչ Արքազան Հայրը ձեմարանի բացումն առիթ առնելով՝ խօսեց ուսման և յատկապէս կրօնական ուղղութեամբ

ուսման կարեւորութեան, Հանգուցեալ Տ. Գէորգ Դ. Կաթողիկոսին նպատակի, Ձեմարանի մեծ ծախս շինութիւնը ու շարունակութեան գործը յառաջ վարելու, և Վեհափառ Տ. Տ. Մակար Սրբազնագոյն Կաթողիկոսի անդուլ և անխոնջ ջանքի համար Ձեմարանը ըստ ամենայնի բարգաւաճ դրութեան մէջ պահպանելու համար։

Այս առենաբանութիւնից յետոյ Միաբանական Ուխտը եկեղեցական թափօրով և պատարագիչ Սրբազան Հայրը զգեստաւորեալ, Ձեմարանի աշակերտները իրանց ուսուցիչներով և Ալէքսանդրապօլից, Ղարսից, Ախալցխայից, Ախալքալաքից և այլ հեռաւոր և մօտաւոր տեղերից Մողնուոյ Ս. Գէորգայ առնուով եկած ուխտաւորները գոլորգալով սաճարից խմբուեցին Ձեմարանի հիմնադիր հանգուցեալ ի Տէր Գէորգ Դ. Հայրապետի գերեզմանի շուրջը ուր և կատարուեց հանգստեան պաշտօն։

Ձաշին սեղանատանը խօսեց Սինոդի աւագ անդամ Գերապատիւ Տ. Թադէոս Սրբազան Արքեպիսկոպոս և աւուր պատշաճին համեմատ բարեմասնութիւններ արեց ազգի և եկեղեցւոյ յարատև հաստատութեան, հանգուցեալ Հայրապետի հոգւոյ փրկութեան և ներկայիս՝ առողջութեան և բարօրութեան, Ձեմարանի յարատև հաստատութեան և բարեկարգ բարգաւաճման, ուսուցչական խմբի և աշակերտելոց յաջողութեան համար։ Մէջ ընդ մէջ Ձեմարանի աշակերտք երգուէին, որով թէ սեղանը պատշաճաւոր շուք էր ստանում և թէ ուխտաւորները լսելով երգեցողութիւնը զգաճվում ու զուարճանում էին հոգևորապէս։ Երեկոյեանը Ձեմարանի ճակատը լուսաւորուած էր գոյնզգոյն լապտերներով և դրուագներով։

ՀԱՆԳԷՍ

ՄՐՑԱՆԱԿԱՑ ԲԱՇԽՈՒԱՆ

ԻԶՄԻՐԵԱՆՑ ԿՏԱԿԻՆ*)

—o—

Երէկ, Ազգ. Ժողովոյ գումարումէն յետոյ, Պատրիարքարանի մեծ սրահին մէջ տեղի ունեցաւ Իզմիրեանց Կտակի մրցանակաց բաշխման հանդէսն ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր։ Ներկայ էին Կրօն. և Քաղ. Ժողովոց դիւաններն ու անդամոց մեծագոյն մասը, բազմաթիւ Երեսփոխանք և ազգային պաշտօնական անձինք։

Նախագահական աթոռին դէմ յատուկ սեղանի մը շուրջը բազմած էին Իզմիրեանց Կտակի Գործադիր Մնայուն Ճանձնաժողովոյ անդամք՝

Գեր. Գարեգին վրդպ. Թաթարեան

Արժ. Ծովհ. քհ. Հիւնքեարպէ յենտի

« Ծովհաննէս քհ. Մկրեան

Վսեմ. Գաբրիէլ էֆ. Նորատունկեան

Մեծ. Ծովհաննէս էֆ. Կիւմիւեան

« Ծովհաննէս էֆ. Խոյեան

Նախ և առաջ Ճանձնաժողովոյ ատենապետ Նորատունկեան Վսեմ. Գաբրիէլ էֆէնտի կարդաց հետևեալ տեղեկագիրը։

Բարձրաշնորհ Ս. Հայր և Տեարք,

Ինչպէս յայտնի է, բարեյիշատակ Ծովսէփ Իզմիրեանց բնիկ Ազլաթեցի աղգայինն իւր 1874 ապրիլ 15 թուական կտակագրով 20,000 ռուբլի գումար մը կ. Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանի տրամադրութեան ներքև դրած և սահմանած է որ անոր տարեկան տոկոսաց կէսն բաշխուի ամ ըստ ամէ ի մրցանակ աղգային գրականութեան և պատմութեան վերաբերեալ լաւագոյն երկասիրութեանց հեղինակներուն, և միւս կէսն՝ ի նպաստ յատկանշ Կարնոյ կամ՝ Մշոյ մէջ աղջկանց վարժարանի մը։

Ազգ. Երեսփոխանական Ժողովն, որոյ հաղորդուած էր սոյն կտակագիրն կտակարար Աղնուաշուք Աղա Կարապետ Եղեանցի կողմէ, յանձնեց գործադրութիւնն Ազգային Կեդրոնական Վարչութեան, և սա ևս՝ յետ իմաստասիրելոյ բարեյիշատակ հանգուցեալին կամքն, ըստ կտակագրին՝ Մնայուն

(*) Կ. Պօլսոյ Հայոց Պատրիարքարանը պաշտօնագրով ուղարկել էր խմբագրութեանս հանգուցեալ Յովսէփ Իզմիրեանի կտակի Գործադիր Մնայուն Ճանձնաժողովոյ Սահակ—Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութեան տեղեկագիրը եւ մի ապդ եւս ուղարկած լինելով խմբագրութենս խնդրել էր հրատարակել, համաձայն անցեալ տարուց հրատարակելով ազգը, այժմ եւս մեծ հաճութեամբ հրատարակում ենք Իզմիրեան կտակի մրցանակաց բաշխման հանդիսի տեղեկագիրը։

յանձնաժողով մ՝ ընտրել և պատրիարքական 20 յունվար 1886 թիւ պաշտօնագրով մը սոյն ընտրութիւնն ծանուցանելով յանձնարարեց Ծանձնաժողովոյս, ի մէջ այլոց, որ բարեյիշատակ Հանգուցեալն կողմէ՝ յանուն Սրբոց Սահակայ և Մեսրոպայ հաստատեալ սոյն մրցանակաբաշխութիւնը կատարուի հանդիսաւոր կերպիւ ամ յամէ ազգային յարկի մը ներքև, յաւուր ծանին սրբոց Թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ, Սակայն ատոյց Ցունիս 24ին՝ քննչաց վկայութիւնք, որք պիտի գնահատէին մրցանակի արժանի գրական երկերն, տակաւին հաղորդուած չը լինելով Ծանձնաժողովոյս Ազգ. Վարչութեան Խառն ժողովոյ արտօնութեամբ սոյն հանդէսն՝ այս նուագ բացառիկ կերպով տեղի կունենայ այսօր։

Եւ ըստ որում՝ Հանգուցեալ կտակարարին մնհուանէն ի վեր առաջին անգամ է որ Ա. Պոլսոյ Պատրիարքարանի միջոցաւ կը կատարուի մրցանակաց բաշխումն, կարևոր կը համարիմք մնայուն Ծանձնաժողովոյ կատարած քննութեանց և գործողութեանց վրայ խօսիլ յառաջ՝ տեղեկութիւն տալ պատուարժան Հանդիսականացդ Թէ՝ բարեյիշատակ Հանգուցեալն ի կենդանութեան իւրում՝ երկու տարին մի անգամ քննել տալով Ազգին մէջ երևցած երկասիրութիւններն, հետևեալ կերպով տնօրինած ու վարձատրած է զայն։

1877ին Հանգուցեալ Վահան վարդապետ Թաստամիանցի տուած է 500 րուբլի՝ վասն Պատասխանագրոց Մխիթարայ Գօշի և իրաւաբանական հնատալառութեանց նորա ի վերայ նոյն գրոց։

1879ին մրցանակի արժանի աշխատութիւն չգտնուելով տպագրուած է Մովսէս Խորենացւոյ պատմութիւնն, նոյնպէս և Ագաթանգեղոսի տպագրութեան ծախուց մի մասն հոգացուած է յօգուտ Հայերէն գրոց տպագրութեան Ընկերութեան ի Թիֆլիս։

1881ին առաջարկեալ աշխատութիւններէն մրցանակի արժանի դատուած են Հ. Ղևոնդ Վ. Ալիշանի «Ճիրակ ը և Նորայր Բիւզանդացւոյ «Հայկական Բառաքննութիւնն, որոց և մրցանակի գումարն բաժնուելով առաջինն ստացած է 1000 ֆր. իսկ երկրորդն 500 ֆր։

1883ին մրցանակի արժանի գրութիւնք չներկայացուելով, կտակարարին բազմանաց Համեմատ տպագրուած է իւ. Բեռլինպուրկ նախ Պատմութիւն Ասողկայ Տարօնացւոյ և ապա Ղևոնդ Երէցի։

Այսպէս բարեյիշատակ Հանգուցեալն ի կենդանութեան իւրում քաջալերած է ներկայացեալ գրական աշխատութիւններն և օգտակար համարած է Նախնեաց Մատենագրութեան տպագրութիւնը սատարել, երբ մրցանակի արժանի երկ մը չէ եղած ի վեր նոյն տարւոյ մէջ։

Կտակագրին գործադրութիւնն Ազգ. Պատրիարքարանի յանձնուելէն ի վեր, Ծանձնաժողովոյս ներկայ տարւոյ փետր. 14 թուակնաւ պաշտօնական հրաւիրանաց վրայ, քննութեան և մրցման ներկայացան հետևեալ աշխատութիւնք։

1. «Հնգլեզուական նախալեզու» տպագրեալ երկասիրութիւնն Հայր

Սերովբէ Տէրվիշեանի.

2. «Փաւանձեմ և Ղիմկիա» թատերգական ձեռագիր երկն Էմմանուէլ Էֆ. Եսայեանի.

3. «Ճաշակ ոսկեղէն պարանոցեան, միամեայ հատաքածոյ դրարուեստ հանդիսին, կընծայեն իւրոյս Պատուելիա Էֆ. Գարագաշեան և Յակոբ Էֆ. Գուրգէն.

4. «Նկարագրական ուղևորութիւն ի Հայաբնակ գաւառս» Մանուէլ Էֆ. Միրախորեանի.

5. «Ուլնիա» Յակոբ Էֆ. Ալլահվէրտեանի.

Ինչպէս կը տեսնուի, այս երկասիրութիւններն ամենքն ալ մայրաքաղաքիս մէջ տպագրուած կամ աշխատասիրուած գործեր են. Առաջին երիքին նկատմամբ քննչաց վկայութիւնը թէև պատուաբեր, այլ սակայն անհամաձայն դատուեցան այն պայմանաց կամ ուղղութեան, որոյ համեմատ պէտք է պատրաստուած ըլլան մրցման ներկայացեալ երկք. հետեւաբար աւելորդ է աստանօր մի առ մի յիշատակել այդ գրոց ցոյց տուած առաւելութիւններն՝ պայմանաց մասին ունեցած թերութեանց հետ։

Միայն թերևս օգտակար ըլլայ ընդհանուր ի մէջ այլոց քազմահմուտ Պատուելիա Էֆ. Գարագաշեանի քննագատութեան մէկ հատուածն ի վերայ «Հնդեվրոպական նախալեզու» լեզուաբանական գրքին.

«Նախ գալով իմ առաձին կածեաց՝ կըսեմ. Գիտեմ և կը վկայեմ թէ Հ. Սերովբէ Տէրվիշեան է հմուտ լեզուաբանութիւն (linguistique) կոչուած ուսման. սակայն յիշեալ երկասիրութիւն նորա՝ ըստ իս, թէև բազմաշխատ գործ չէ ոչ ապացուցական, և ոչ մանաւանդ հայերէնի բազմարուեստ կազմութեան գաղտնեաց վրայ նոր լոյս կը սփռէ. Հեղինակին նպատակն, ինչպէս յայտնի է յառաջաբանէ գործոյն, «Հնդեվրոպական նախալեզու,» է յերևան հանել, զի թերթ ըստ գլխաւոր տարբերաց, լեզու մը որ եղած է մայր ցեղ մը լեզուաց որ կը թուին լինել գտեալք այն կորուսեալ և անհետացեալ մօր։ Այս մայր լեզուն կը կարծէ գտնել հեղինակն՝ համեմատելով ընդ միմեանս այն համացեղ կամ համազեղ կարծուած լեզուներն, Թող որ այս ճանապարհաւ դարերով յառաջ անհետացեալ լեզու մը, եթէ կար ևս, երևան հանել գժուարին է, եթէ ոչ անհնարին, գեռ որշուած կամ ստուգիւ գիտցուած չէ թէ կար արդեօք ժամանակաւ այնպիսի մայր լեզու, որոյն այժմու կարծեցեալ դուստրներէն։ Թողլով սակայն այս կէտը, գամ եղանակին որով հեղինակը կը ջանայ ցուցնել այս վերացեալ խնդիրը, Ըսի թէ գործը չէ ապացուցական. Հեղինակը կը ճգնի ծանօթներ հանել անծանօթէ մը որ խնդրոյ տակ է։ Զորօրինակ տեսնելով Լա. argentum, Ճն. argyros Հյ. արծաթ, որ ունին իրարու հետ մօտ նմանութիւն, սոցա առաջին վանկն arg կառնու իբր արմատ նախալեզուին մէջ, և անկէ կը դնէ այն եռատառիկ նմանութիւնք այսպէս արմատը կը ապացուցուի նմանութենէն, և նմանութիւնն՝ արմատէն։ Ասոր կըսուի նոյնը նոյնով ցուցնել։ Բոլոր գործին տրամաբանական ընթացքն այս է։ Բայց մենք ունինք զանդիկ լեզուին մէջ էրէ-

ըլլու, որմէ չիք տարակոյս թէ առնուած է պատրաստ մեր «ըզ»ն բառն ո՞ գիտէ թէ լատինն իւր argentum, և Յոյնն իւր argyros առած չէ պատրաստ նոյն էրէզ-ն-էն առևտրական և կամ ուրիշ յարաբերութեամբ. Եթէ դնենք ևս թէ լատինին, յունին և զանգկին այս նմանութիւնն է հին հասարակաց մօրէ մը, ցորչափ այս մայրը չկայ ի միջի, նմանութիւնը լոկ արտօնութիւն չտար մեզ արմատներ ստեղծելու այն նոյնութիւնն ապացուցանելու համար. Նոյնութիւնը կը ցուցնէ միայն թէ այս լեզուները կամ այն լեզուները խօսող ազգերը ժամանակաւ յարաբերութեան մը մէջ էին իրարու հետ, Ուրիշ օրինակ մը, Հեղինակը նոյնպէս ենթադրելով garbh արմատ մը նախալեզուին մէջ, անկէ կը հանէ Պարս. կէրէֆ-ն, Գերմ. կրաֆէն, և Հայ. էրաւ էրաւ բառերը. Գիտենք սակայն գէթ մեր լեզուին համար թէ, մեր գրաւել, գրաւ բառն է պրս. կէրէվիտէն, կէրէվ բառէն որ կը նշանակէ հաւատալ, հաւատ, և ոչ կէրէֆ-ն բառէն որ է բռնել.

Վերջապէս ի՞նչ օգուտ մեր լեզուն քոյր ցուցնելու համար ուրիշ լեզուաց, հասարակաց արմատներ ստեղծել, և չանալ մեր բառերն ևս այն արմատներէն հանել. Մեր լեզուին բառերուն ծագման, ուստի և նոցա զօրութեան, և լեզուին մէջ գործող արուեստագիտութեան. եթէ եղած է այնպիսի արուեստագիտութիւն մը, քաջ խելամտելու և անկէ գործնական օգուտ քաղելու համար, մեզ պիտոյ է այնպիսի գործ մը որ ցուցնէ մեզ նախ թէ կա՞ն մեր լեզուին մէջ բառեր կամ ձևեր որ ստուգիւ առնուած են այս կամ այն լեզուէ և ճարտարութեամբ հայացած, և երկրորդ՝ թէ այս առնուած բառերուն բնութեան, յատկութիւններուն և ուրիշ պարագայներու համեմատ շինուած են ի նոցունց նոր և նման գաղափարներ յայտնող նշաններ. Այսպիսի գործ մը, որչափ թերութիւն ունենայ, ըստ մեզ է, գէթ մեր լեզուին համար, ստուգիւ պատմականապէս և բանասիրապէս ապացուցական և գործնական երկասիրութիւն լեզուագիտական.»

Սոյն այս անաչառ քննադատութեան հետ բախտաւոր պիտի համարէինք զմեզ լսել նաև զկարծիս մեծանուն Քերովբէ Պատկանեանցի, այլ սակայն վերահաս անձնական տկարութիւն մը գժբաղդաբար արգելք եղաւ իրեն հաղորդել մեզ իւր քննութեան արդիւնքն ի մասին վերոյիշեալ երկասիրութեան.

Ոչ նուազ ուշադրութեամբ և հետաքրքրութեամբ պիտի լսէիք անշուշտ «Փառանձեմ և Աղիմպիա» գողտր թատերգութեան, ինչպէս նաև «Ճաշակ Ոսկեղէն Դպրութեան» հանդէսի պարունակած պատմական և մատենագրական ինչ ինչ ընտիր հատուածոց նկատմամբ քննչաց կարծիքն, եթէ ինչպէս ըսինք արդէն, այս երկասիրութիւնը համաձայն գտնուէին կտակին պահանջած պայմանացն և մրցման ներթարկուէին.

Անցնելով ուրիմն միւս կրևանց, նախ ընդունելու պատիւն ունեցանք Վ. սեմ. Միքայէլ Էֆ. Փորթուգալեանի (1) գրադատումն «Նկարագրական Ուղևորութիւն ի Հայաբնակ գաւառս» գլխին նկատմամբ, որ հատասիկ.

(1) Նախագահ Մոքսատան Բարձրագոյն Ժողովոյ.

ՕՐԹԱԴՆԿ, 42/24 Յունիս 1887

Վ. սեմաֆայլ էֆէնտի,

Ուշի ուշով ընթերցայ Նկարագրական Ուղևորութիւն ի Հայաստան գաւառս Արևելեան Տաճկաստանի, խորագրով տեղագրութիւնը, բաժան եւս յերիս մասունս, զոր երկասիրած է Մանուէլ Վ. Միրախորեան էֆէնտին, և որոյ նկատմամբ իմ գաղափարս և դատաստանս հարցնել բարեհաճեր էիք 22ին Ապրիլ 1887 և 24 թիւ պատուական նամակաւ։

Այն լայնածաւալ պիտութիւնը որոյ մէջ կը ընակի հայ ազգին մեծագոյն մասը, ճոխութեան և գիտութեան անհուն և ամենազան գանձեր կը պարունակէ, որք տակաւին անծանօթ են մեզ։ Այդ գանձերէդ կարելի եղածօգուտը քաղելու համար, նախ և յառաջ կարևոր է ճանաչել մանրամասնօրէն այդ երկիրդ։ Վաստնորոյ Միրախորեան էֆէնտիի ձեռնարկութիւնը յոյժ գովելի և պիտանի է։

Բայց այդպիսի գործոյ ոչ մէկ մարդու ջանքը և ոչ մէկ ուղևորի գիտութիւնը բաւական է, Հարկ է որ աշխատութիւնը բաժանի, Հանքարան և երկրաբան մը աշխարհիդ խաւերը քննէ. ճարտարապետ մը հին և նոր ձեռակերտից ոճը՝ արուեստը չափերը և պատկերը ծանօթացնէ. Հնագէտ մը արձանագրութիւններով և այլ յիշատակարանօք պատմութիւնը հաստատէ. մէկը՝ այլ և այլ քաղաքաց տեղեաց վաճառականական ներկայ առընչութիւնքն և առջև ընդարձակման համար հնարաւոր միջոցներ ցուցանէ. ուրիշ մը բնակչաց բարքը, կրօնքը, գիտութեան կամ տգիտութեան աստիճանը ուսումնասիրէ և նկարագրէ. այլ ոմն արդի յոյժ պակասաւոր քարտէսները և ցեղագրական, տեղագրական կամ բուսաբանական անօթ ծանօթութիւնքը ճոխացնելու կամ ճշդելու զբաղի, ևլն ևլն։ Այդ զանազան ձեռնարկութիւններդ առանձին առանձին մասնագիտաց ձեռօք կատարուելէ եռքը միայն կարելի կըլլայ ընդհանուրին բաւական ճշգրիտ տեսութիւն մը կամ նկարագիր մը յարդարել։ Մասնագիտութիւնը հարկաւոր է. վասն զի առանց ասոր մարդս շատ անգամ բնաւ չտեսնէր և կամ սուաերակերպ կը տեսնայ ինչ որ երկրին երեսը յայտ յանդիման կը ցուցանէ նմա. իսկ ինչ որ անոր ծոցուն մէջ գաղտնի պահուած են, թաղուած կը մնան ի սպառ։—Կարծեմ թէ ամէն անոնք որ Օսմանեան գաւառաց տեղագրութեամբ զբաղիլ կուզեն, պարտին վերոյգրեալ դիտութեանց մի քանին իրենց ծայրալիր պարագայից նիւթ ընտրել։

Չեմ կրնար զրուցել թէ Միրախորեան էֆէնտին այդպիսի պատրաստութեամբը ձեռք զարկած ըլլայ գործոյն. իւր երկասիրութեանը մէջ ուղած է ամփոփել ամենայն կարգի տեղեկութիւնք, բայց սոքա չատ անգամ աւելի ընթերցողին հետաքրքրութիւնը կը յուզեն քան կը գոհացնեն։ Աղրակ գաւառին նկարագրութեան մէջ որ այդ երկասիրութեանդ ամենէն նշանաւոր մասն է, և որուն համար ուրիշ կողմանէ շնորհակալ ըլլալու պարտական ենք հեղինակին, այդ պատրաստութեան պակասն աւելի զգալի է։

Այսու ամենայնիւ այդ դիտողութիւններդ ընելով, չեմ ուզեր հեղինա-

կին արդիւնքը նուազացնել, պէտք չէ մոռանալ թէ ի՞նչ դժուարին բան է ասիական ներքին գաւառաց մէջ ճանապարհորդելը. թէ ոչքան խոչընդոտներ կը յարուցանեն մանաւանդ մանրակրկիտ քննութեան բնակչաց մերթ վարձին բարբը, մերթ աւելորդապաշտութիւնքը. Միրախորեան էֆէնտի արեւելեայ ոճակիւրայ մի է որ ուրիշներու կռնակը չհամարձակած տեղերը կուգէ մտնել. անօթութիւնը, ծարաւը, փանդի հրկիզը չեն կրնար զինքն յետ կասեցնել իւր կէտ դրած նպատակէն. իւր գրութեանը մէջ կան այնպիսի նորանոր տեղեկութիւններ զոր կարծեմ ոչ ոք առակաւին հաղորդած է յուսմնասիրեալ կամ յօտարազգի ճանապարհորդաց.

Ահա այդ յատկութիւններով Միրախորեան էֆէնտին յոյժ պիտանի ըրած է իւր երկասիրութիւնը. կարելի է թէ ուրիշներն այսուհետեւ աւելի հեղինակութեամբ ճառագրեն եւ լուսաբանեն ինչ որ ինքը արտօրինօք տեսած է եւ մատուցէ իւիք մեզ մէջ թողուցած. Բայց պատմական մէկ քանի նշանաւոր վայրեր ինքն առաջին եղաւ ճանանիշ ընելու ու այդ արդիւնքն ալ փոքր չէ. Միրախորեան էֆէնտի իրեն յատուկ ոճ մի ունի, որ թէպէտ ընդհանրապէս դիւրաւոհ չի կրնար ըսուիլ, և մերթ ընդ մերթ խրթին ալ է, բայց ունի եղական և գաւառական բացատրութեան ձեւեր, որով համայն գրութիւնը նկարագրուած տեղեաց գոյնը կառնու և անոնց նշանը կը կրէ.

Իմ խոնարհ գատողութեամբս, կարծեմ թէ յոլորովին համաձայն կըլլայ բարեյիշատակ Ցովսէփ Եսմիրեանցի պիտանութեանը, վարձատրել Միրախորեան էֆէնտիի երկասիրութիւնը, թէ սորա բուն արժէքին համար և թէ քաջալերն նմանօրինակ աշխատութեանց. (Մոֆոմոթո-Ֆլեան.)

Մնամ

Ազնուափայլ Տէրութեանդ

Խոնարհ ծառայ

ՄԻՔԱՅԷԼ ՓՈՐԹՈՒԱԼ

Գէղ. Խորէն Արքեպիսկոպոս Նար—Պէյ, որում նմանապէս պիտանի էինք, հետեւեալ կերպով կը հաղորդէ մեզ իւր ուղղախոհ դատաստանն.

Վ.ռեմինթայլ Ատենապետ Էֆէնտիի,

Շար 22 ապրիլ թուակիր առ ես ուղղեալ նամակին պատգակցելով Մանուէլ էֆ. Միրախորեանի երկասիրութիւնն մնակագրեալ «Նկարագրական ուղեւորութիւն ի Հայաբնակ գաւառս», կը տառապարկէիք ինձ՝ յանուն Պատուական Ընկերութեանդ, խնդրատասիրել զայն տեղագրութիւն, և բարեյիշատակ Ցովսէփ Եսմիրեանցի կտակեալ միջոցանակարաշխութեան տոքոսն և նպատակին համաձայն գնահատելով զայն, քննութեան արդիւնքն հաղորդել Շուզ.

Ինձ եղեալ յանձնարարութեան համեմատ՝ ընթերցայ վերոյիշեալ նկարագրական ուղեւորութիւնն, որ երեք մասի բաժնուած է, և սկսեալ ի Տրապիզոնէ՝ կը յանգի վերադարձիւ ի Բարձր—Հայոց, յատկմամբ նկարագրի Հայ գիւղացւոց տարեկան կենաց չորս եղանակի, և տանուտերական իշխանութեան, վանական տուրց և քրմաց վրայ համառօտակի ծանօթութեամբք.

Թէպէտ հեղինակն կանուանէ զիւր տեղագրութիւն «պէտական էքսկուրսիա», սակայն չգտայ անդ գիտնական ուղևորութեան մը հանգամանքներ՝ հնագիտական, երկրաբանական, բուսաբանական և այլն տեսակէտներով, թերի է պատմաբանական և մատենագրական յիշատակներէ, լեզուի և ոճոյ կը պակսին խնամք, և յայտնի կերևին նշանք հապճեպ գրութեան ընդհանրապէս, մանգամայն՝ հեղինակին տեսութիւնները՝ ուրեք ուրեք իրենց վիճելի կողմերն ունին։

Բայց սակայն գովելի կը գտնեմ՝ հեղինակին աղգասիրական ոգին՝ որ բոլոր գրուածոյն մէջ կը փայլի, և ցուցուցած ըստ բաւականի հմտութիւնը, խոհեմութիւնն և անձնուէր աշխատութիւնն ի հետազօտութիւն մեր հայրենի երկրին, և ի ծանօթացումն նորա արդի վիճակին՝ գէթ արտաքնապէս։

Հետևաբար՝ եթէ Մխրանօրեան էֆէնտիի սոյն տեղագրութիւնը չկարենայ համարուիլ կատարեալ գործ մը, արժանաւոր առաջին մրցանակին, բայց և այնպէս՝ ինձ կը թուի թէ կարելի է պատուել զայն մրցանակաւ իւրք. ոչ միայն ի վարձատրութիւն աշխատութեանց և զոհողութեանց նորա՝ որով կը հանդիսանայ մինն ի չքանասէր տեղացւոց Հայաստանի,—այլ զի, քաջալերուի նա՝ և այլք ևս այսուհետև՝ ի նմանօրինակ երկասիրութիւնս՝ օժտեալս առաւելագոյն կատարելութեամբ, յօգուտ Հայ ազգին և աշխարհագրութեան նորա։

Հաղորդելով Պատուարժան Ցանձնաժողովդ զարդիւնս քննութեան իմոյ և զդնահատութեան՝ թողում իմաստութեան նորա անօրինել զարժանն։

Մնամ՝ յարգանօք և օրհնութեամբ

Աղօթարար

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ի Պէշիքթաշ, 29 մայիս 1887

Իսկ Յակոբ Ալահվերտեանի «Ուլնիա» երկասիրութեան վերաբերմամբ ահաւասիկ ինչ որ կը գրէ մեզ մեծաշուքն աղա Կարապետ Եզեանց.

Մեծապատիւ Պ. Առենապետ.

Պ. Ց. Ալահվերտեանի «Ուլնիա կամ Զէյթունն» երկասիրութիւնն ինձ յուղարկելով հարցուել էիք իմ կարծիքս նորա մասին։ Ես թէպէտ զբաղուած լինելով չափազանց՝ միջոց չունեցայ ուշի ուշով ուսումնասիրելու այդ գիրքը, բայց կատարած լինելու համար Ձեր յանձնարարութիւնը՝ ահա կարճատօտիկ յայտնում եմ իմ կարծիքս նորա մասին, որչափ որ հնար ունեցայ ծանօթանալու նորան։

Ա. Այս գիրքը մի համագրութիւն է Զէյթունի հայ ժողովրդեան և ուսումնասիրում է նորա ընտանեկան, մտաւոր և բարոյական կողմերը հանգերձ տեղւոյն աշխարհագրական տեղագրութեամբ, և տալիս է նիւթ հետազօտելու Զէյթունի բարբառը։ Պատմական մասը պակասում է նորա-

նում՝ բայց այս թեպետ և մեծ թերութիւն է գրքի լրութեան՝ սակայն պէտք է վերագրել այնպիսի հանգամանքներին որոնք աւելի զօրաւոր են եղել քան հեղինակի ցանկութիւնն՝ այս մասում եւս գրքը լիակատար անելու։

Բ. Գրքի Ա. և Բ. մասերը, որոնք իսկապէս հեղինակին են պատկանում՝ օգտակար են, որովհետև մատակարարում են առատ նիւթ՝ ուսումնասիրելու համար Զէյթունի հայոց մատուռը և բարոյական յատկութիւնները և համեմատելու համար ուրիշ գաւառների ժողովրդեան հետ։ Հեղինակն այստեղ գովելի մանրամասնութեամբ նկարագրում է Զէյթունցուն, նորա ծննդեան օրից մինչև մահն ու թաղումը, և հաղորդում է բազմաթիւ մանրամասն տեղեկութիւններ, որոնք խիստ կարեւոր են ժողովրդագրութեան համար։ Բայց այս մասերն ունին իրանց թերութիւնները եւս, որոնք գլխաւորապէս գրականական ոճի և լեզուի մէջ են պարունակվում։ Ոճն այնքան կրճատ և համառօտ է որ այս մասերը կարծես ոչ թէ բուն շարադրութիւնը լինին, այլ ծրագիր (programme) մի ընդարձակ շարադրութեան։ Լեզուն եւս զերծ չէ թերութիւններից, և ինչպէս երևում է գրաբառը տեղ տեղ ղգալի կերպով ներգործել է նորա աշխարհաբառին վերայ, որ երբեմն բաւական խորթ է թուում։

Գ. երրորդ մասը, որ պարունակում է Զէյթունի բարքաւոյ անէծք և օրհնութիւնք, երգմունք, առակք . . . և փոքրիկ բառարան՝ արժանի է ամենայն համակրութեան։ դրքա շատ թանկագին նիւթեր են լեզուագէտին՝ մեր բարբառների և գրական հին ու նոր լեզուների համեմատական ուսումնասիրութեան համար։

Դ. Ասյս բոլորից հետևում է, որ գիրքը օգտակար և գովելի ձեռնարկութիւն է և մշակուած է բաւական հասուն կերպով։ Նորա թերութիւնները վերաբերում են ո՛չ թէ նիւթին և բովանդակութեան, այլ արտաքին կազմութեան, ուստի և շատ չեն նուազեցնում նորա արժանաւորութիւնները։

Իմ կարծիքով այս գիրքը՝ թէ իւր բացարձակ արժանաւորութեանց համար և թէ քաջալերելու համար նման և աւելի կատարեալ ձեռնարկութիւններ՝ արժանի է տարեկան մրցանակի, կամ գոնէ նորա մէկ մասին, եթէ լինին ուրիշ արժանաւոր գործեր եւս։

ԿԱՐԱՊԵՏ ԵԶԵԱՆՑ

8 յունիսի 1887
Ս. Պետերբուրգ

Պատուարժան քննչաց վկայութիւնները ստանալէ յետոյ Յանձնաժողովս գումարելով ի նիստ ընդ նախագահութեամբ Ամեն. Պատրիարք Հօր, և ի նիստ առնելով երկասիրութեանց պատրաստութեան եղանակը, հեղինակայ ունեցած անձուկ միջոցներն և այլ պարագայներն և ի քաջալերը պլոց՝ միաձայնութեամբ արժան դատեց որ Սահակ Մեսրոպեան մրցանակը այս տարի բաշխուի ընդ մէջ այս երկու հեղինակաց, տրուելով, առաջինին՝ այն է Մա[illegible]էյ էֆ. Մրիաթսրեանի 35 ոսկի՝ վասն «Նկարագրական ուղևորութեան»,

և երկրորդին՝ Ցակոբ էֆ. Ալլահվերտեանի 25 ոսկի՝ ջան Ուլնիա անուն երկասիրութեան։

Հարկ չէ ըսել թէ սոյն երկու գրեանք մրցման մասուցուելէ առաջ՝ արդէն տպագրութեամբ ի լոյս ընծայուած են՝ հաւանութեամբ Հանրային Կրթութեան Պաշտօնատան։

Ցանձնաժողովս երբեմն փափաքանաց և ըղձից բարեհիշատակ և ազգասէր Հանգուցեալին Ցովսեփեայ Էմմիրեանց, ջերմապէս կը բաղձայ որ այս վարձատրութիւնք քաջալերէ և հրապոյր մ՝ ըլլան հետզհետէ առաւել համալից և կարեւոր աշխատութիւններ պատրաստելու և այլ ոչ միայն մայրաքաղաքիս գրագիտաց և հեղինակաց մէջ, այլ և այն ամեն երկիրներ ուր կը գտնուին մշակք ազգային գրագիտութեան և պատմութեան և գիտուն հետազօտողք, զի կտակին պայմանաց մին ևս է որ ընդունուին ի գնահատութիւն բոլոր այն երկասիրութիւններն որք են հայ լեզուաւ, աշխարհաբառ թէ գրաբառ, ձեռագիր կամ տպագիր, առանց նկատողութեան առնելու երկիրն ուր նոքա ղրկուած են։

Եւ արդարև ուսումնասիրելու նիւթք այնքան ճոխ են և բազմազան որ Ցանձնաժողովոյս իրաւունք կուտան յուսալու թէ նոր մեր գրագէտք լուրջ նկատողութեան առնուն և քրքրուն նախնեաց թողած մատենագրական գանձերն, ի հայ կամ յօտար լեզուս, և ի լոյս ընծան ինչ որ կը վերաբերի անցեալին մէջ հայոց ունեցած կենցաղին, բարուց և սովորութեան, անցից և յիշատակարանաց, պատմական, տեղական, նկարագրական, լեզուաբանական ևլն, առաւել ևս օգտակար ծառայութիւն մը մատուցած կըլլան հայ գպրութեան և արժանապէս կը պատասխանեն կտակարարին բուն նպատակին, որ միակ առարկան է մեր ամենուս ըղձից և ջանադրութեանց։

Ներկայք չկրմ ծափահարութեամբ ողջունելին Ցանձնաժողովոյ տեղակագրութիւնն։

Ցետոյ, Քալ. Ժողովոյ Ատենապետ Վ. ահմ. Նուրհան էֆէնտի խօսք առնելով, բացատրեց թէ ինչ կերպիւ կազմուած էր այդ մնայուն Ցանձնաժողովն որ նոյն իսկ բարեհիշատակ բարերարին կտակի տրամադրութեանց կը համապատասխանէր։ Նուրհան էֆէնտի գովեց Ցանձնաժողովոյ աշխատութիւններն և յարեցուց թէ առաջին անգամն էր որ այս տեսակ հանդէս մը տեղի կ'ունենար ազգին մէջ, ծանոյց թէ այս հանդէս յառաջիկայ տարւոյ մէջ Սրբոց Թարգմանչաց ատեն օրը տեղի պիտի ունենայ առելի շքեղօրէն։ Ապա խնդրեց Ամեն, Ս. Պատրիարք Հօրմէն որ օրհնէ ժնծանուն հանգուցեալն յիշատակը։

Ս. Պատրիարք Հայրն ոտքի հրնելով գովեց և օրհնեց Էմմիրեանց ազգ. Ցովսէփի յիշատակն և հոգեհանգստեան աղօթքներ կարդաց։ Ներկայք յոտնկայս ունկնդրեցին Ս. Նախադահին բանից և այս գեղեցիկ հանդէսը փակուեցաւ։

Ապա զովացուցիչ բնկելիներ և օշարակներ մատուցուեցան հանդիսականաց։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ.

Շնորհակալութեամբ ստացանք

1. «Ծրագիր Հայ ապրագրութեան և ազգային իրաւագանա՛ն առաքինութիւնների». Հաւաքեց և կազմեց Գր. Խալաթեանց. Մոսկվա. Տպարան Հերբէկ. 1887 ամի. Գինն է 50 կօպ.

---

2. «Երևայրիք» 1882—1887 պատկերազարդ, առաջին գիրք—Գարուն. Թիֆլիս Մ. Ոսկանեանցի տպարան, 1887 ամի. Ընշակ Մեհրաբեան—Սլինգ. Գինն է 50 կօպ.

ՊԱՀՏՕՆԱԿԱՆՔ.

(ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ).

ՎԱՐՉԱԿԱՆՔ.

8 Յուլիսի. Վաղարշապատում վերաբնակող Տ. Անաստասիա Արամէլիքեան 1882 Յունին, նախքան իւր մահը յօգուտ Վաղարշապատի Ծիածկան Հոգ. դպրոցների կտակած լինելով քառասուն րուբլի, իսկ եկեղեցւոյն՝ տասն րուբլի, Սինօդը որոշից գրել Էրնստիոնին և հոգաբարձուներին որ յիշեալ գրամները ստանան հանգուցելոյ կտակակատար Պ. Ալէքսանդր Արամէլիքեանից։

---

24 Յուլիսի. Սինօդը ըստ անօրինութեան Վեհափառ Կաթուղիկոսի որոշման իոյլ տալ նկատելիօգար քաղաքի հայերի շինել դպրոցական շէնքեր աղայոց և օրիորդաց համար մակարդակին համեմատ, հաստատութեան ընտրած յանձնաժողովի ձեռքով։

---

19 Օգոստ. Սինօդը Երևանի Թեմի Թեմական Փոխանորդի, յանուն Վեհափառ Կաթուղիկոսի յայտարարութեան համեմատ, ըստ հաճութեան Վեհափառ Կաթուղիկոսի Թոյլ տուից Երևանայ Կոնսիստորիային Երևանայ առաջնորդարանի հիւսիսային կողմը հին անապատի տեղը քահանայացուաց պատրաստութեան համար ընծայարան շինել, կարողութիւն ունեցող եկեղեցիներից, քաղաքներից՝ տասնեակ, իսկ գիւղերից՝ հնգեակ րուբլի ստանալով։

---

24 Օգոստ. Սինօդը որոշից պատուաւոր քաղաքացի Հանդուգեալ Թադէոս կէլէ—Շահենեանցի կտակին համեմատ պատուիրել Բնսարաբիոյ և Նոր Նախիջևանի Կոնսիստորիային որ կտակում նշանակուած յօգուտ ձեմարանի մի մի հարիւրանոց 5% տոկոսաբեր բանկային երեք տոմսերը ստանալով՝

հանգուցելոյ որդի և կտակակատար Յովհաննէս Թաթէոսեան Կէլէ—Ջահինեանից՝ ուղարկել Ճեմարանին յատկացեալ արկղում պահելու դրամագլուխը, իսկ մի մի 5% տոկոսաբեր հարիւրանոց տոմսերը ըստ կտակին ստանալով՝ յատկացնել Նոր Նախիջևանի Մարդասիրական ընկերութեան, Հոգալարձութեան Զքաւորաց և Հոիփսիմեան օրիորդական ուսումնարանին. այլև գնել նոյն քաղաքի Ս. Թէոդորոս եկեղեցւոյ անունով 20 փթանոց մի զանգակ։

—

26 Օգոստ. Սինօդը որոշեց Թիֆլիսեցի այրի Մարիամ Փուղինեանցի կտակին համեմատ պատուիրել Թիֆլիսի Կոնսիստորիային, որ յորդորէ յիշեալ տիկնոջը որ յօգուտ Ճեմարանի կտակած մի հազար րուբլին այժմէն վճարէ, յետ մահուան թողլ տալով թաղել Մողնեայ գաւթում։ Իսկ մնացեալ բարեգործական նպատակով կտակած գումարները որք են 1) իւր թաղման համար 1000 րուբլի, 2) 1000 րուբլի Թիֆլիսի Գայիանեան օրիորդաց ծխական դպրոցին, պայմանաւ՝ որ իւրաքանչիւր տարի իւր մահուան տարեդարձին հոգեհանգիստ կատարուի, 3) 1000 րուբլի Թիֆլիսի արհեստաւորաց դպրոցին, պայմանաւ՝ որ նոյն դրամով հայ աղքատ չքաւորներ ստանան, 4) 300 րուբլի Թիֆլիսի Ս.Ստեփաննոս եկեղեցւոյ կրօնաւորներին, 5) Ներսիսեան հոգևոր դպրոցին այլ ևս 1000 րուբլի՝ որ իւր անուամբ աղքատ հայ մանուկներ ուսանին. 6) 900 րուբլի դնել արքունի գանձարանը տոկոսը իւրաքանչիւր տարի իւր մահուան տարեդարձի հանգստեանը Մողնեայ հոգևորականներին բաժանելու. ընդ ամենայն 6000 րուբլի։ Եթէ լինի՝ որ պարտքերը ամբողջովին ստացուին՝ աւելացած դրամները բաժանուին յիշեալ հիմնարկութեանց վերայ ըստ որոշեալ քանակութեան, իսկ եթէ ամբողջովին չստացուին, վնասը գարձեալ պիտի բաժանուի յիշեալ հաստատութեանցը տրուելիք գումարների վերայ։ Կտակակատարնշանակուած է տեղական պատուաւոր քաղաքացի Եագոր Թումանեանց։

—

Մողնեայ Ս. Գէորգայ վանուց վանահայր Արժ. Պետրոս Վարդապետ Ալվազեան և Մայր Աթոռոյս Միաբան և Ճեմարանի Տեսչի օգնական Արժանապատիւ Վահան Վարդապետ Տէր Գրիգորեան արձակուելով իրանց պաշտօններից կարգուեցին առաջինը՝ Ղզլարու, իսկ երկրորդը՝ Նուխեայ փոխանորդ. իսկ Մողնեայ վանահայր կարգուեց նոյն վանքի միաբան բարեշնորհ Ղուկաս Աբեղայ Եղիազարեանց։

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆՔ·

3 Յուլիսի· Սինոդը որոշեց վաւերացնել Ղարաբաղի Կոնսիստորիայի որոշումնս որով Դահարանու գործակալութեան Խանձիկ գիւղի Յովհաննէս քահանայ Իշխանեանցը իւր ապօրինաբար կատարած պսակների և զաւակմկութեան համար դադարեցնել քահանայագործութիւնից և պարտաւորել ստորագրութեամբ յիշեալ քահանայի որդուցը՝ որ չըմոյլ տան նորան քահանայագործութիւն անել· նորան հասանելի քահանայական արդիւնքը դարձնել ի շահ վիճակին և ապօրինաբար կատարած պսակները համարել անվաւեր։

—

6 Յուլիսի· Սինոդը որոշեց վաւերացնել Ղարաբաղու Կոնսիստորիայի որոշումը, որով Մովսէս քահանայ Տէր Աբրահամեանց Բարնեցի և Սիմէօն քահանայ Ադիլբէկեան Գետաշէնցի առաջինը՝ Գանձակի յաջորդութեան պատկանող պսակ կատարելուն համար, իսկ երկրորդը նախապէս թոյլ տալով պսակել և ապա Հոգ· կառավարութեան յայտնելու համար ենթարկել վեց ամսեայ ապաշխարութեան տեղական եկեղեցւոյ դրանը և ամեն մինից պահանջել տասնեհինգական րուբլի յօգուտ հոգևորականաց որբոց և այրեաց։

—

17 Յուլիսի· Սինոդը որոշեց վաւերացնել Նոր Նախիջևանի և Բեսսարաբիոյ Կոնսիստորիայի որոշումն՝ որով Խարկովի Նշան քահանայ Տէր Նշանեանց, առանց օրիորդի քահանայի կողմից վկայական պահանջելու օրիորդի անչափահասութեամբ պսակ կատարելուն համար ենթարկվումէ Կոնսիստորիայի նկատողութեան համեմատ վիճակի մի որ և է եկեղեցու դրանը առանց փիլոնի սաղմոս ի ձեռին վեց ամսեայ ապաշխարութեան։

—

21 Յուլիսի· Սինոդը որոշեց վաւերացնել Երևանայ Կոնսիստորիայի որոշումն որով Շիրուվալուեցի Պօղոս քահանայ Տէր Յարութիւնեանը ենթարկվումէ մի ամսեայ եկեղեցական ապաշխարութեան տեղական եկեղեցւոյ դրանը առանց փիլոնի՝ սաղմոս ի ձեռին, Ծննդեան վկայականի մէջ կամայական փոփոխութիւն անելուն համար։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ·

Մամուլի տակից դուրս եկած է ՕՐԱՑՈՑՑ 1888 նահանջ թուականին Վրիատոսի, ունի ընդարձակ յաւելուած — Տօնարանական Համառօտ գիտելիք, և Արդալարութիւն ժամասացութեան։

Ի՝ ծախսուիմ Թեմական և Հոգ. Կառավարութեան Ետեսներում, Տփխոյ Վեար. գրավաճառանոցում, Երևանում՝ Պ. Կարապետ Դադամեանի կրպակում. Ղէ-քսանդրապօլում՝ Պ. Մոեփան Ի՝ եհապետեանի կրպակում և Տպարանական Ժողովի մօտ։ գինն է 20 կ.

Ընարտոից Հրատարակուած է «ԷՔՕՈՒ ՀԱՅՑԱՍՏՆԵՑՑ» Հեղինակութիւն Գեր. Մաղաքիա եպիսկոպոսի Օրմանեանց, վաճառւում է Թեմական և Հոգ. Կառավարութեան Ետեսներում, ի Տփխիս՝ Կենդրոնական գրավաճառանոցում, Երևան՝ Պ. Կարապետ Դադամեանցի կրպակում և ի Տպար. Ժողովի մօտ. գինն է 40 կ.

Մամուլի տակ է ՁԵՌԱՑ ՏՕՆԱՑՈՑՑ, իսկ ԼԻԱԿԱՏԱՐ ՄԱՅՐ ՄԱՐՏՈՑ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ շուտով մամուլին կը յանձնուի։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԻ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Հնութիւնք Հայրենեաց	—	40
Հռովմէական եկեղեցի	—	80
Հանդէս բացման Ճեմարանի	—	10
Հրահանգ քերականութեան	—	30
Հրահանգ աւագ քահանայից	—	10
Հրահանգ վասն թեմական տեսչաց	—	20
Ձայն բազմաց	1	—
Ձայնագրեալ երգեցողութիւնք Ժամագրոց	8	—
Ձայնագրեալ երգեցողութիւնք Ս. Պատարագի	3	—
Ձայնագրեալ շարական ՅԹ-ից	60	—
Ճանապարհորդութիւն Հակոտհաուզէնի	—	80
Ճաշոց	60	
Մաղթանք վասն Հայրապետի ազգիս	—	20
Մաշտոց ձեռնադրութեան քահանայից և Մ. իշխանութեան	4	—
Ծաւելուած Ժամագրոց Ձայնագրեալ	—	20
Նախակրթանք Ա. մասն	—	45
Նոյն Գ. մասն	—	50
Ուխտանէս եպիսկոպոսի պատմագրութիւն	1	20
Ուղղագրութիւն	—	50
Պատմութիւն ժողովոյ Հայաստանեայց եկեղեցւոյ	—	40
Պատմութիւն Խաչակրաց	—	30
Պատմութիւն Հայոց Լեհաստանի	—	30
Պատմութիւն Հռոմոսի Վանուց ի Շիրակ	—	20
Պատմութիւն Սեւանայ	—	20
Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ	2	—
Պատկերասէր պատկերատեաց	1	—
Ջամբռ (պատմագրութիւն Սիմէօն Կաթուղիկոսի)	1	—
Սաղմոս Դաւթի	1	—
Սկզբունք բուսաբանութեան	—	15
Վաղարշապատ	—	50
Տեղեկագիր Ճեմարանի 1881—82	—	10
Նոյն 1882—83	—	10
Փնար Մշեցւոյ և Վանեցւոյ	—	30
Օրացոյց (1888)	—	20
* Օրէնք վայելուչ կենցաղավարութեան	—	40

(*) Առաղանիշ գրեանք հրատարակուած են ուրիշ տեղեր։

20 թուբլուց աւելի գնողին եւ կանխիկ վճարողին զիջուած կը լինի 20°/₀ին (ճանապարհածախքը գնողի վրայ)։

„ԱՐԱՐԱՏ“

ԱՄՍԱԳԻՐ

Կը հրատարակուի ամիսը մի անգամ. բաժանորդագրութիւնը պարեկան է և սկսւում է Յունվար ամսից: Բաժանորդագինն է Ռուսաստանում՝ 4 րուբլի. Տաճկաստանում, Պարսկաստանում և Եւրոպայում՝ 5 րուբլի, Հնդկաստանում 6. ր.

— Ծրագիրն է

— ՕՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲՈՒՐՍԱԿԱՆ

ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

Ararատում կը հրատարակուեն նաև Վեհափառ Հայրապետի կոսի և Սինոդի հոդմից եղած վարչական այլ և այլ հրահանգութիւնները և Սինոդի օրագրութիւնների քաղուածներ:

Ararատում կը հրատարակուեն յիշատակարանների իրև պատմական աղբիւր. կարատապուեն լրագրներից իւր ուղղութեանը յարմար յօդուածները, գետեղելով քոտ բովանդակութեան:

Կը հրատարակուեն նաև լուրեր Ս. Էջմիածնի և այլ վերնագրով: Հայաբնակ քաղաքներում և գաւառներում առաքելական դասակարգի պաշտօնեաները թող դիմեն տեղական Հոգ. իշխանութեան գործակատարներին կամ ուղղակի Ս: Էջմիածին: Հայոց Ժամանակ. Типогр. Комитетъ—Տպարանական ժողովին:

Ararատի այն գործակալները, որոնք մինչև յարդ բաժանորդաց ցուցակն ուղարկած չեն, պատուխանատու են Ս. Սինոդին: